World trade, its extensive logistics, opportunities and profits, brought massive changes. New technologies spread. Pack animals (camel, donkey) had to be domesticated and bred on a large scale. The new generations of animals needed specialist breeders and tamers as well as caravan drivers and guides. Whole artisanal industries must have emerged to supple saddles and other girding for the animals, possibly, also carts in order to maximize the weight carried by donkeys. But carts required at least basically paved roads to protect the valuable and breakable cart axles. Oftentimes the roads had to cross natural obstacles which required the construction and maintenance of bridges. Archeologists only recently began systematically looking for such very ancient bridges — and they were found, at least in the territory of Greece. These Mycenaean-period stone structures have been long known but mis-identified as much later artefacts of classical Antiquity or even medieval.

Bridges offered excellent opportunities to collect tolls on the roads. The same must have been true of caravan sarays. It is estimated that nearly eight tons of water could be consumed every night by a caravan of 500 donkeys, an ordinary size already in the XIXth century BCE, according to the cuneiform tablets from ancient Kanesh.<sup>10</sup> The infamously murderous

---

<sup>9</sup> Peter Magee. *The archaeology of prehistoric Arabia: adaptation and social formation from the Neolithic to the Iron age*. (Cambridge University Press, 2014)

<sup>10</sup> Gojko Barjamovic. *A Historical Geography of Anatolia in the Old Assyrian Colony Period*. (Chicago University Press, 2011)

Bronze-Age battle in Tollnse, Germany, apparently happened over a bridge.<sup>11</sup>

The local societies acquired complexity evidenced in rich burials. Artisans specialized. Merchants and their self-governing city-states first appeared. Chieftains equipped the now professional warriors with bronze weapons which were no longer suitable for hunting like the old disposable arrowheads of flintstone. This was proven in experimental reconstructions, a booming new method.<sup>12</sup>

Gender and rank inequalities become visible for the first time. This brings more puzzles. In the mounds of copper-rich steppes in Russia, Kazakhstan, and Ukraine archeologists found prominent males buried in woman's dress: a transgender ritual?<sup>13</sup>

Chariots were also found in large number (over twenty now) in the burial mounds of Sintashta culture in today's Chelyabinsk province of Russia, on the border with Kazakhstan. The swift spoked wheels are now dated to the 21<sup>st</sup> century BCE, the earliest known in the world. The DNA of horses indicates the domestication of this animal between river Don and the Urals mountains.<sup>14</sup>

This contradicts received knowledge regarding technological innovation.<sup>15</sup> Apparently, it often spread from the 'barbarian' periphery rather than civilized cores.<sup>16</sup>

---

<sup>11</sup> Andrew Curry. "Slaughter at the bridge: Uncovering a colossal Bronze Age battle". (24 March 2016). *Science*. <https://www.science.org/content/article/slaughter-bridge-uncovering-colossal-bronze-age-battle> Retrieved 04 October 2022

<sup>12</sup> Иван Семьян. *Пробиваем доспех из лука: какая стрела уложит противника?* [АНТРОПОГЕНЕЗ.РУ](https://www.youtube.com/watch?v=s2198SrILw) Ученые против мифов-17. 22 апреля 2022 <https://www.youtube.com/watch?v=s2198SrILw> Retrieved 04 October 2022.

<sup>13</sup> Епимахов А. В. и коллектив авторов. *Южный Урал в начале эпохи металлов. Бронзовый век*. (Челябинск: Издательство Южноуральского государственного университета, 2021).

<sup>14</sup> Librado, P., Khan, N., Fages, A. *et al.* The origins and spread of domestic horses from the Western Eurasian steppes. *Nature* **598**, (2021): 634–640.

<sup>15</sup> T.D. Hall, Nick Kardulias, P. & Chase-Dunn, C. World-Systems Analysis and Archaeology: Continuing the Dialogue. *J Archaeol Res* **19** (2011): 233–279.

<sup>16</sup> Kristiansen, Kristian, with Thomas Lindkvist and Janken Myrdal (eds.) *Trade and Civilisation. Economic Networks and Cultural Ties from Prehistory*. (Cambridge University Press, 2018)

Sail had to be invented in the early Bronze Age. At New York University in Abu Dhabi a team of scholars led by the Dutch marine archeologist and museum curator Prof. Robert Parthesius reconstructed from the Mesopotamian seals and material evidence a ship made of bundled reeds covered in bitumen and under a woolen sail.<sup>17</sup> We now know why the Sumerian sources praised the ‘black-sailed ships’ — the natural color of goat wool.

Still more significant was the invention of keeled ship.<sup>18</sup> Its origins so far remain contested. Perhaps, it was in the Eastern Mediterranean, and certainly long before the Viking drakkar previously considered the earliest prototype.

The caravan trails and shipping lanes connected what now emerges as a much bigger space of interactions than what was cautiously believed just a couple decades ago. The remnants of brightly colored cotton cloth of indubitably Indian origin were identified in the southern Urals, so rich in copper and gold deposits, and also in the Caucasus, the source of metals and earliest wines. It now seems incontrovertible that wine was a major innovative export of Kuro-Arax culture to the (traditionally beer-drinking) Mesopotamia and Levant.<sup>19</sup>

Once again, we might be seeing in this instance a backflow of innovation from periphery to the core of the contemporary world-system. This furthermore extends on the famous (and therefore often criticized) concept of the ‘secondary products revolution’ of the prominent British archeologist Andrew Sherratt.<sup>20</sup>

---

<sup>17</sup> The Má II Project: Ancient Boat Lab. NYUAD <https://nyuad.nyu.edu/en/research/faculty-labs-and-projects/ma-the-ancient-boat-lab.html> Retrieved 04 October 2022

<sup>18</sup> Sherratt, S. & Sherratt, A. “From luxuries to commodities; The nature of Bronze Age trading systems.” *Bronze age trade in the Mediterranean: Papers presented at Rewley House*. (Oxford, December, 1989).

<sup>19</sup> Patrick E. McGovern. *Ancient Wine: The Search for the Origins of Viniculture*. (Princeton: Princeton University Press, 2006); Yasur-Landau, Assaf. “Levant”. Pp. 832-848 in: Cline, E. H. ed. *The Oxford Handbook of the Aegean Bronze Age*. (Oxford: Oxford University Press, 2010).

<sup>20</sup> Marciniak, A. “The Secondary Products Revolution: Empirical Evidence and its Current Zooarchaeological Critique.” *Journal of World Prehist* **24**, 117–130 (2011).

In Denmark, the big data sets of things as mundane as the teeth of ancient cows and cattle urine saturating the floors of cowsheds correlate with the volumes of copper and tin imports. There had to be a trade balance. Did Denmark specialize in dairy exports two millennia prior to the Viking age?<sup>21</sup> Curiously, copper ingots from the Uluburun shipwreck near the southern coast of Anatolia were shaped as cowhides. The ingots also had the standardized weight of 26 kg, *i.e.* the Biblical talent.<sup>22</sup>

Silver, a rather impractical metal, assumes the earliest function of global money.<sup>23</sup> This English word itself might be traced to the Babylonian measure of precious weight, the *mina*. Moreover, trade brought the cultural abstraction of standard colors: green, blue, red.<sup>24</sup> In an illustrative anecdote, the American archeologist Eric Cline cites the instance when Babylonian king Hammurabi (the same of the famous laws inscription) ordered to send back the pair of red shoes of Creto-Minoan manufacture that he for some reason disliked. Just like on Amazon.com today! (Cline, 2020.)

The ongoing excavations in ancient Kanesh, a trading town in Anatolia whose population proved unexpectedly large (20-35 thousand) and ethnically mixed. Judging by the personal names, toponyms, and the scant word borrowings, the local natives were some of the earliest known Hittites or, perhaps, the speakers of other Indo-European languages of ancient Anatolia. The expat Assyrian merchants wrote and apparently spoke in a western Semitic language delivered a treasure-trove of correspondence from the 19<sup>th</sup> century BCE. This subverts the common assumption that literacy was confined to priests and scribes. Evidently, many more Assyrians than previously assumed were literate. Importantly, this included women, at least

---

<sup>21</sup> Timothy Earle. *How Chiefs Come to Power: The Political Economy in Prehistory*. Stanford University Press, 1997

<sup>22</sup> Pare, C. "Weighing, commodification, and money", pp. 508–527 in: H. Fokkens, A. Harding (eds.) *Oxford Handbook of the European Bronze Age*, (Oxford University Press, 2013).

<sup>23</sup> Colin Renfrew. "Systems of value among material things: The nexus of fungibility and measure", pp. 249–260 in: J. K. Papadopoulos, G. Urton (eds.) *The Construction of Value in the Ancient World*, Cotsen Institute of Archaeology Press, 2012.

<sup>24</sup> Kristiansen, Kristian, with Thomas Lindkvist and Janken Myrdal (eds.) *Trade and Civilisation. Economic Networks and Cultural Ties from Prehistory*. Cambridge University Press, 2018

from the merchant households. Some 9000+ cuneiform letters were recovered so far, an archive rivaling the medieval Medicis. It is being translated by the team of Harvard-based Danish assyriologist Gojko Barjamovic. The data call for a socio-economic interpretation.

Much attention was drawn to the mysteriously sudden and simultaneous demise of no less than seven Bronze-age great powers ca. 1177 BCE. This event constitutes the main focus in the eponymous international bestseller.<sup>25</sup> But what was that had collapsed? How did it emerge in the first place? And what came after it? Urartu and the neo-Assyrian empire, classical China and Rome. What were the successor world-systems? Ian Morris and Walther Scheidel suggested pioneering formulations in this regard.<sup>26</sup> The space can no longer be called uncharted.

Our focus might be on the earlier, still coalescing world economy of Bronze Age and, *inter alia*, the place of Armenian highlands in this big picture. A lot is to be excavated and interpreted. But no less is to be gleaned from the connections transpiring in the panoramic view of the earliest known world-economy. The founders of world-systems analysis, Fernan Braudel still in the 1940s-1970s and later Immanuel Wallerstein in the 1980s-2000s on various occasions hypothesized that world-economis could have existed in much earlier epochs. But Braudel and Wallerstein chose to focus of the early modern origins of capitalism. Evidently, digging deeper in history in their lifetimes was hardly supported by archeological and epigraphic evidence. This situation has been rapidly changing in the early twenty-first century. An exciting scientific revolution is happening today in the study of earliest complex societies. I call on you to become part of this intellectual movement.

---

<sup>25</sup> Eric Cline. *1177 B.C.: The Year Civilization Collapsed*. (Princeton University Press, 2014).

<sup>26</sup> Ian Morris. *Why the West Rules—For Now?* New York: Farrar, Straus and Giroux, 2010; Idem, *The Measure of Civilisation: How Social Development Decides the Fate of Nations*. (Princeton: Princeton University Press, 2010).

**ԲՐՈՆՉԻ ԴԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
 ՀԱՄԱԿԱՐԳ. ԹԵՉԵՐ ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՄԱՐ  
 Գևորգի Դեղուզյան  
 Ամփոփագիր**

Բրոնզի դարը ավանդաբար դիտվում է որպես մ.թ.ա. երրորդ և երկրորդ հազարամյակների պատմական ժամանակաշրջան: Իմ հիմնական պնդումն/ամսաձայնությունը այն է, որ Բրոնզի դարը ավելի իմաստալից է դիտարկվում աշխարհագրական առումով, որպես առևտրի և մշակութային փոխանակումների փոխկապակցված տարածք, որն ընդգրկում է Աֆրո-Եվրասիան, բայց ոչ արևադարձային Աֆրիկան, էլ չասած Ավստրալիան և Ամերիկան: Բրոնզեդարյան համաշխարհային համակարգը տարածվում էր Սկանդինավիայից և Բրիտանական կղզիներից մինչև Եգիպտոս և Միջագետք, Ինդոսի հովտի քաղաքակրթությունից և Հին Արաբիայից մինչև Ուրալ և Արևմտյան Միբիր, հնարավոր է նաև Չինաստան և Հարավարևելյան Ասիա: Աշխարհագրական առումով, պղինձը և անագը, որպես բրոնզի երկու մետաղական բաղադրիչներ, պատահականորեն բաշխված են մոլորակի վրա, ինչը պարտադրեց առևտուրը երկար տարածությունների վրա: Իր հերթին, մետաղների համաշխարհային առևտուրը ստեղծեց լոգիստիկ կարիքների և հնարավորությունների ամբողջ համակարգեր: Հետևանքները ներառում էին սոցիալական բարդ կառույցների առաջացումը՝ իշխանություններ, դիվանագիտություն, վաճառականներ, մասնագետ պղնձագործներ և զենքեր պատրաստողներ, պրոֆեսիոնալ ռազմիկներ: Ի հայտ եկան նոր փոխադրամիջոցներ, ինչպիսիք են առագաստանավը և ընտանի կենդանիները (էշ, ուղտ, ձի): Երկրորդական ապրանքների (գինի, կտորեղեն, մշակված խեցեղեն) փոխանակումը հանգեցրեց հեղափոխության սպառման մեջ: Այս թեզերը նպատակ ունեն քննարկում առաջացնել ամենավաղ աշխարհակարգի, նրա մորֆոլոգիայի և հոսքերի մասին: Սա կարող է տարածվել նաև ավելի ուշ համաշխարհային համակարգերի համեմատական վերլուծության վրա, որոնք մեզ հայտնի են Հին շրջան, միջնադարյան «Մետաքսի ճանապարհ» և ժամանակակից կապիտալիզմ եզրերով:

**ՎԱՐՁԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈՒՈՒՄՆԵՐԸ  
ԾԱԳՈՒՄԻՑ՝ ՄԵՐ ՕՐԵՐ<sup>1</sup>**

*Դավիթ Հովհաննիսյան<sup>2</sup>  
Շուշան Կյուրեղյան<sup>3</sup>*

*DOI 10.56673/18294502-22.15-31  
Ներկայացվել է՝ 15 Հունիս 2022  
Ընդունվել է՝ 14 Նոյեմբեր 2022*

**Բանալի բառեր՝** *Վարձկանություն, վարձկաններ, կոնֆլիկտներ, զինյալներ, զինված ուժեր*

*Հոդվածի հիմնական նպատակն է պատմական զարգացման համատեքստում ներկայացնել «վարձկանություն» երևույթը և ցույց տալ, թե ինչպես է վարձկանության էությունը և դրա ընկալումը ժամանակի ընթացքում փոփոխվում: Հոդվածում մասնավորապես նշվում է, որ վարձկանությունը սկիզբ է առել դեռևս հին ժամանակներում և մեր օրեր է հասել որոշակի փոխակերպումներով: Դարեր շարունակ այն ծառայել է կոնկրետ խնդիրների լուծմանը և համարվել է ոչ միայն բնական, այլ հաճախ՝ պատվաբեր գործունեություն: Հոդվածում անդրադարձ է կատարվում պատմության տարբեր շրջափուլերում վարձկանության առանձնահատկություններին, հավաքագրման եղանակների փոփոխությանը, քննվում է վարձկանների և*

---

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F251 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների բաժնի տնօրեն: Էլ. փոստ՝ dhovhannisyan@ysu.am

<sup>3</sup> ԵՊՀ Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների բաժնի կրտսեր գիտաշխատող: Էլ. փոստ՝ shoushan.kyureghyan@ysu.am

*վարձողների գործողությունների օրինականությունը: Հետազոտությունը ուսումնասիրում է նաև հասարակությունների հասունացման արդյունքում վարձկանություն երևույթի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությունը, երևույթը դատապարտող միջազգային օրենքների շրջանակը և դրանց վերանայման անհրաժեշտությունը:*

Երրորդ հազարամյակի սկզբից համաշխարհային և տարածաշրջանային անվտանգության համակարգերի և տարբեր տեսակի կոնֆլիկտների հետազոտողների և վերլուծաբանների ուշադրությունը գրավել է մի երևույթ, որը չի կարելի գնահատել որպես բոլորովին նոր: Խոսքը *վարձկանության* մասին է: Որևէ փոխհատուցման դիմաց մարդկային ռեսուրս վարձելու և առաջադրված խնդիրների լուծման համար կիրառելու պրակտիկան սկիզբ է առել դեռ հին աշխարհում և որոշակի վերափոխումներով հասել մեր օրեր:

Ժամանակակից աշխարհում ևս վարձկան զինյալները ակտիվ հավաքագրվում և օգտագործվում են տարբեր կետերում թեժացող կոնֆլիկտների ժամանակ: ՄԱԿ-ի՝ «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և վերապատրաստման դեմ» միջազգային կոնվենցիային<sup>4</sup> միացած պետությունների քանակը չի գերազանցում 50-ը, այն ստորագրած երկրներից շատերը ևս մեղադրվում են օտարազգի զինյալների ապօրինի օգտագործման մեջ (օր. Լիբիա, Ադրբեջան): Այսօր սա վեր է ածվել խիստ տարածված պրակտիկայի, մասնավորապես Միջին Արևելքի (Middle East) անընդհատ թարմացվող կոնֆլիկտների

---

<sup>4</sup> UN Human Rights Office of the High Commissioner, “International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries”, adopted 04 December 1989 by General Assembly resolution 44/34, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-against-recruitment-use-financing-and>.



շրջանակում: Զինյալ վարձկանները, լինելով գործիք իրենց ֆինանսավորող պետության ձեռքին, առավելապես հակված են ապօրինի գործողությունների և մարդու իրավունքների խախտումների:

Մելբուրնի համալսարանի պրոֆեսոր Էնդրյու Ալեքսանդրան իր «Վարձկանները» հոդվածում<sup>5</sup> պնդում է, որ վարձկանները կարող են գոյություն ունենալ միայն այնտեղ, որտեղ կա դրամային տնտեսություն: «Նման տնտեսության զարգացումը մի շարք հետևանքներ է ունենում ռազմական ուժերի վրա ընդհանրապես, և վարձկանների վրա մասնավորապես: Փող ունեցողները կարող են օգտագործել իրենց հարստությունը ռազմական փորձագիտություն ձեռք բերելու կամ անձնական ծառայություններ վարձելու համար: Վարձկան բառն ընդհանուր առմամբ ունի նվաստացուցիչ ենթատեքստ: Ընդունված է այն կիրառել այն անհատների (և նրանց գործողությունների) նկատմամբ, ովքեր ոչ պատշաճ կերպով դիմում են այդ քայլին՝ անձնական օգուտի կամ ֆինանսական շահի նկատառումներից ելնելով»:

Վարձկանությունը, սակայն, միայն վերջին հարյուրամյակի ընթացքում է սկսել ընկալվել որպես ոչ պատվաբեր աշխատանք, դարեր շարունակ այն ծառայել է կոնկրետ խնդիրների լուծմանը և համարվել է ոչ միայն բնական, այլ հաճախ՝ նաև պատվաբեր գործունեություն:

Ամերիկացի քաղաքագետ Դեբորա Ավանտը պայմանագրային հիմունքներով կռվող զինյալների վերելքը՝ կապում է ֆեոդալական համակարգի անկարողության հետ՝ լուծելու արդիականացող հասարակության գնալով ավելի բարդացող կարիքները, ինչպես օրինակ առևտրային ուղիների պաշտպանությունը և այլն: «Նման պատճառներ կան նաև այսօր.

---

<sup>5</sup> Andrew Alexandra, “Mercenaries”, *G. Martel (ed.) Encyclopedia of War*, 2011, <https://www.academia.edu/6124276/Mercenaries>.

գլոբալացված աշխարհի շուկայական ճնշումները, տեխնոլոգիան և սոցիալական փոփոխությունները ստեղծում են բազմաթիվ պահանջներ, որոնք ազգային զինված ուժերը դժվարությամբ են բավարարում»<sup>6</sup>: Կանոնավոր զինված ուժերը որպես կանոն չունեն այն ճկունությունը և դինամիկան, որոնք հատուկ են վարձկանների կազմակերպություններին:

Ռազմական մասնագետ Շոն Մաքֆեյթի կարծիքով այս հարցում ոչինչ չի փոխվել. «Ծանոթ պատմություն է: Գերտերությունը պատերազմ է գնում և բախվում է սպասվածից ավելի ուժեղ դիմադրության՝ քաղաքական և ռազմական սահմանափակումների պատճառով չունենալով բավարար ուժեր դրան դիմակայելու համար: Գերտերությունը պատերազմում իրեն աջակցելու համար որոշում է վարձել պայմանագրային զինյալների: Զինված պայմանագրայինները և՛ օրհնություն են, և՛ անեծք. նրանք մի կողմից կենսական նշանակության անվտանգային ծառայություններ են ապահովում պատերազմական արշավի համար, մյուս կողմից երբեմն սպանում են անմեղ քաղաքացիների՝ պատճառ դառնալով ռազմավարական անհաջողություններ, և վնասում են գերտերության լեգիտիմությանը: Առանց այդ պայմանագրային զինյալների գերտերությունը չէր կարող պատերազմել: Նրանց հետ, սակայն, հաղթելն ավելի դժվար է: Ուշագրավ է, որ զինված պայմանագրայինները ոչ թե Իրաքում են կամ Աֆղանստանում, այլ Իտալիայի հյուսիսում, և ոչ թե 2007 թվականն է, այլ 1377 թվականը: Խոսքը Միացյալ Նահանգների մասին չէ, այլ Հռոմի պապ Գրիգոր XI-ի ղեկավարած պապության, որը կռվում է Միլանի դքսության գլխավորած հակապապական լիգայի դեմ: Զինված պայմանագրայինների կողմից խաղաղ

<sup>6</sup> Debora Avant, “Mercenaries”, *Wiley-Blackwell Encyclopedia of Globalization*, 20-28, <https://www.academia.edu/2870726/Mercenaries>.

բնակչության ողբերգական սպանությունը տեղի է ունեցել ոչ թե Բաղդադում, այլ Չեզենայում՝ 630 տարի առաջ<sup>7</sup>:

Սակայն առնվազն մի սկզբունքային փոփոխություն տեղի է ունեցել՝ մեր ժամանակներում, ի տարբերություն նախկինի, վարձկանությունը հասարակության կողմից դատապարտվում է և որպես երևույթ քրեականորեն հետապնդվում է: Մի շարք որոշումներում և օրենքներում այն համարվում է հանցագործություն մարդկության հանդեպ, ինչպես նաև լուրջ սպառնալիք է հանդիսանում մարդու իրավունքների, ազատ ինքնորոշման իրավունքի կիրառման, անվտանգության և կայունության համար: Այս բոլոր վտանգավոր երևույթները հատկապես ակնհայտորեն ի հայտ եկան թե՛ Երկրորդ համաշխարհային պատերազմին հետևած ապագադուրացման գործընթացների ժամանակ, թե՛ Սառը պատերազմի ավարտից հետո տեղի ունեցող իրադարձությունների ընթացքում:

Բացի այդ, ի տարբերություն վկայակոչվող 14-րդ դարի, երբ վարձկան էին համարվում բոլոր այն արհեստավարժ զինվորները, որոնք վարձատրվում էին իրենց մատուցած ծառայությունների համար առանց հաշվի առնելու նրանց հպատակությունը<sup>8</sup>, ներկայումս վարձկան է համարվում այն զինվորականը, որը չի հանդիսանում համապատասխան պետության քաղաքացի:

Հոդվածի հիմնական խնդիրն է ներկայացնել «վարձկանություն» եզրույթով բնորոշվող գործունեության առանձնահատկությունները պատմության տարբեր շրջափուլերի

<sup>7</sup> Sean McFate, “Mercenaries and War: Understanding Private Armies Today”, *National Defense University Press*, February 7, 2018, 61, <https://ndupress.ndu.edu/Media/News/Article/2031922/mercenaries-and-war-understanding-private-armies-today/>.

<sup>8</sup> Stephen Morillo, “Mercenaries, Mamluks and Militia: Towards a Cross-Cultural Typology of Military Service”, *Medieval Mercenaries* (Brill: Leiden, 2007), 243-260. [https://www.academia.edu/449307/Mercenaries\\_Mamluks\\_and\\_Militia\\_Towards\\_a\\_Cross-Cultural\\_Typology\\_of\\_Military\\_Service](https://www.academia.edu/449307/Mercenaries_Mamluks_and_Militia_Towards_a_Cross-Cultural_Typology_of_Military_Service).

իրողությունների և հանգամանքների համատեքստում, և այդ առանձնահատկությունների հիման վրա վեր հանել թվային քաղաքակրթության համակարգում ժամանակակից վարձկանության կերպափոխումները:

Շատ հաճախակի են դարձել վարձկանների ներգրավման դեպքերը հատկապես մեզ առավել հետաքրքրող «Երեք ծովերի» մեզատարածաշրջանում<sup>9</sup>: Վարձկանների կազմակերպված, լավ զինված և մարզված, բարձր կարգապահությամբ աչքի ընկնող ջոկատների օգտագործումը գրանցվել է Սիրիայում, Եմենում, Լիբիայում, Իրաքում, Ուկրաինայում, Արցախում և մի շարք այլ երկրներում: Թուրքիայի հովանավորությամբ Սիրիայում գործող «Սիրիայի ազգային բանակի» զինյալ վարձկանների ներգրավվել են Լիբիայում<sup>10</sup> և Արցախում<sup>11</sup> ընթացող ռազմական գործողություններին, Եմենում Սաուդյան Արաբիայի և Արաբական Միացյալ Էմիրությունների հովանավարությամբ կռվել են մոտ

<sup>9</sup> «Երեք ծովերի» մեզատարածաշրջանը «Երեք ծովերի համակարգ» տեսության առանցքային եզրույթներից է: «Երեք ծովերի» տեսությունը միասնական համատեքստում դիտարկում և ուսումնասիրում է Միջերկրական, Սև և Կասպից ծովերի ավազանները ընդգրկող ընթացող գործընթացները: Մանրամասն տե՛ս Դավիթ Հովհաննիսյան, «Տարածաշրջանային զարգացումներ. Երեք ծովերի տեսություն», *Վերլուծական տեղեկագիր 9*, (2016), 8-36: Դավիթ Հովհաննիսյան, «Երեք ծովերի համակարգ», *Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի դպրոց*, հոկտեմբերի 31, 2015 թ., <https://www.youtube.com/watch?v=cKhHTAMIE34>, (հասանելի է 11.12.2022), Davit Hovhannisyanyan., “Regional Security Concepts in the “Three Seas System””, *Analytical Bulletin 11*, (2017) Regional and National Security Dynamics, 14-17.

<sup>10</sup> “Libya: Violations related to mercenary activities must be investigated”, UN experts, accessed 11.12.2022, <https://www.ohchr.org/en/news/2020/06/libya-violations-related-mercenary-activities-must-be-investigated-un-experts?LangID=E&NewsID=25970>

<sup>11</sup> “Private sources ... Starting transfer of 1st batch of Syrian mercenaries to Azerbaijan”, Syrian Observatory for Human Rights, accessed 11.12.2022, Lindsey Snell, “From Hamza Division source. Supposedly these Hamza men arrived in Baku today via Ankara.”, Twitter, 22 September 2020, <https://twitter.com/LindseySnell/status/1308489785493852160>, “Mercenaries in and around the Nagorno-Karabakh conflict zone must be withdrawn”, UN experts, accessed 09.12.2022, <https://www.ohchr.org/en/press-releases/2020/11/mercenaries-and-around-nagorno-karabakh-conflict-zone-must-be-withdrawn-un>.

15000 վարձկան սուդանցիներ և էրիթրեացիներ<sup>12</sup>: Մարդու իրավունքների սիրիական դատարանը և այլ աղբյուրներ տեղեկություններ են հաղորդում նաև Ուկրաինայում Ռուսաստանի կողմից սիրիացի վարձկանների փոխադրման վերաբերյալ, ինչը, սակայն, այլ անկախ աղբյուրների կողմից չի հաստատվել<sup>13</sup>:

Գործնականում կանոնավոր հիմքի վրա է դրվում մասնավոր ռազմական ընկերությունների (այսուհետ՝ ՄՌԸ) օգտագործումը բոլոր տեսակների մարտական գործողություններում: Շոն Մաքֆեյթը՝ վերլուծելով 2020թ. Սիրիայում տեղի ունեցած մարտը ամերիկյան բանակի ստորաբաժանումների և ՄՌԸ Վազների միջև, որը ավարտվեց վարձկանների ջախջախմամբ, զգուշացնում է. «Վարձկաններն առավել զորեղ են, քան կարծում են փորձագետները. դա լուրջ բացթողում է: Ովքեր ենթադրում են, թե նրանք ազգային զինված ուժերի էժանագին նմանակումներ են, իրենց պնդումներով աղետի են հանգեցնում, քանի որ շահույթ հետապնդող զինյալները բոլորովին այլ որակի մարտիկներ են: Մասնավոր ռազմական ընկերությունները, ինչպիսին է Վազների խումբը, ավելի շատ նման են մեծապես զինված բազմազգ կորպորացիաների, քան ծովային հետևակի կորպուսին: Նրանց աշխատակիցները հավաքագրվում են տարբեր երկրներից, իսկ շահութաբերությունը որոշում է ամեն ինչ: Հայրենասիրությունն անկարևոր է և երբեմն՝ բեռ: Ջարմանալի չէ, որ վարձկանները ավանդական գործիքակազմով չեն կռվում, և նրանց դեմ օգտագործվող ավանդական պատերազմական ռազմավարությունները կարող են հակառակ արդյունք տալ<sup>14</sup>»:

<sup>12</sup> Mona Issa, "Mercenaries in Yemen: Nationalities, numbers & horrors", *Al Mayadeen*, 29 March 2022, <https://english.almayadeen.net/news/politics/mercenaries-in-yemen:-nationalities-numbers-horrors>.  
<sup>13</sup> "Over 40,000 Syrians reportedly register to fight for Russia in Ukraine", Syrian Observatory for Human Rights, accessed 06.12.2022, <https://www.syriaahr.com/en/243241/>.  
<sup>14</sup> Stephen Morillo, նույն տեղում:

ՄՌԸ-ի թիվը տարեցտարի աճում է, նրանք հիմնականում շատ լավ են զինված, ունեն բոլոր անհրաժեշտ օժանդակ ծառայությունները, հրամանատարները որպես կանոն բարձրակարգ մասնագետներ են: Այս ստորաբաժանումները կատարում են միայն այն խնդիրները, որոնք նշված են վարձողների հետ կնքված պայմանագրերում և ենթարկվում են միայն այդ շրջանակներին:

Սակայն միաժամանակ վարձկանների հավաքագրումը կատարվում է նաև հնուց եկած ավանդական ձևերով, երբ համապատասխան միջավայրում լուր է տարածվում այն մասին, որ այսինչ երկրում վարձկանների պահանջ կա: Յանկացողները խմբերով և անհատապես հավաքագրվում են, տեղում կազմվում են համապատասխան ստորաբաժանումներ, որոնք դրվում են հավաքագրող կողմի հրամանատարության տակ:

Նման կերպ հավաքագրված վարձկանների մասնակցությունը ռազմական գործողություններին արձանագրվել է նաև 44-օրյա պատերազմի ընթացքում<sup>15</sup>:

\*

\*

\*

Հարց է ծագում, թե որքանով են օրինական մի կողմից՝ վարձկանների, և մյուս կողմից՝ վարձողների գործողությունները: Չէ՞ որ միայն 19-րդ դարից սկսած կարելի է արձանագրել հասարակության բացասական վերաբերմունքի ձևավորումը վարձկանների նկատմամբ: Հազարամյակներ շարունակ վարձկանությունն ընկալվել է որպես իսկական խիզախ տղամարդկանց ազնիվ աշխատանք, երբ վարձկանն իր արյունն է

---

<sup>15</sup> Ed Butler, “The Syrian mercenaries used as 'cannon fodder' in Nagorno-Karabakh”, *BBC*, 10 December 2020, <https://www.bbc.com/news/stories-55238803>:

թափում վարձի դիմաց: Միայն հասարակությունների հատունացման և հումանիտական գաղափարների տարածմամբ վերաբերմունքն այս երևույթի նկատմամբ սկսեց աստիճանաբար փոխվել:

Հատկանշական է, որ չնայած այն հանգամանքին, որ, ինչպես արդեն նշվել է, այս երևույթը շատ հին պատմություն ունի, այնուամենայնիվ վարձկանությունը որպես քրեորեն հետապնդվող գործողություն միջազգային օրենքներում սկսել է ընդգրկվել միայն անցած դարի վերջին քառորդից: Վարձկանությունը հստակ ձևակերպում է ստացել Միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) շրջանակում՝ Ժնևյան կոնվենցիաները լրացնող համար 1 արձանագրության 47-րդ հոդվածում<sup>16</sup>: Մեկ այլ կարևոր փաստաթուղթ է ՄԱԿ-ի «Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և վերապատրաստման դեմ» միջազգային կոնվենցիան<sup>17</sup>:

Հարկ է նշել, որ 60-ական թվականներից ի վեր, երբ վարձկանները լայնորեն ներգրավված էին ապագադուրացման գործընթացների արդյունքում աֆրիկյան մայրցամաքում տեղի ունեցող պատերազմների և ռազմական բախումների մեջ<sup>18</sup>, նրանց

<sup>16</sup> Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), 8 June 1977, <https://ihl-databases.icrc.org/applic/ihl/ihl.nsf/INTRO/470>.

<sup>17</sup> UN Human Rights Office of the High Commissioner, “International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries”, adopted 04 December 1989 by General Assembly resolution 44/34, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-against-recruitment-use-financing-and>.

<sup>18</sup> Ապագադուրացման գործընթացների ընթացքում վարձկանության լայն օգտագործումը երկար քննարկումներից հետո հանգեցրեց նրան, որ 1977թ. Լիբրեկիում ընդունվեց Աֆրիկյան միասնության կազմակերպության կոնվենցիան Աֆրիկայում վարձկանության վերացման մասին: Այն ստեղծվել էր Փորձագետների հանձնաժողովի կողմից և ուժի մեջ մտավ 1985 թ.: Այս կարևոր փաստաթղթում նշվում էր, որ մայրցամաքում արգելվում են ինչպես վարձկանների, այնպես էլ վարձկանության կիրառումը: Վարձկանների և վարձկանության կիրառումը բնութագրվում է որպես Աֆրիկայում խաղաղության և անվտանգության դեմ հանցագործություն անկախ նրանից, թե այն կատարվել է անհատի, խմբի,

մասին հիշատակումները շատ հազվադեպ էին: Սակայն վերջին շրջանի իրադարձությունները ստիպում են փորձել հասկանալ այս կարևոր և վտանգավոր երևույթի ներկայիս դրսևորումների առանձնահատկությունները և ձևափոխումները, ուստի անհրաժեշտ է տեսնել, թե ինչ զարգացումների է ենթարկվել այն պատմության ընթացքում, ինչ գործոններ են ազդել վարձկանության ձևերի և խնդիրների փոփոխության վրա:

Սովորաբար ասում են, որ վարձկանությունն այնքան հին է, որքան մարդը, ինչն, իմ կարծիքով, վկայում է այս երևույթի էության թյուրըմբռնման մասին: Նույնիսկ տարբեր տիպի միջազգային կազմակերպությունների որոշումները և ընդունված օրենքները իրենց ձևակերպումներում անդրադառնում են միայն «վարձկան», այսինքն՝ առանձին վարձված զինյալ հասկացությանը<sup>19</sup>,

կազմակերպության, պետության կամ պետությունների ներկայացուցիչների կողմից: Կոնվենցիայի իրավական ձևակերպումները հետագայում հիմք դարձան այլ տարածաշրջանային և ազգային նման ուղղվածություն ունեցող որոշումների և օրենքների համար: Organization of African Unity Convention for the Elimination of Mercenarism in Africa. Concluded at Libreville, Gabon, on 3 July 1977, <https://treaties.un.org/doc/publication/unts/volume%201490/volume-1490-i-25573-english.pdf>.

<sup>19</sup> Օրինակ, վերը նշված ՄԱԿ 1977 թ. Կոնվենցիայի առաջին հոդվածում «վարձկան» հասկացությունը հետևյալ կերպ է ձևակերպված. ցանկացած անձ, որը ա) տեղում կամ արտասահմանում հատուկ հավաքագրվել է զինված կոնֆլիկտում կռվելու նպատակով,

բ) փաստացի մասնակցում է ռազմական գործողություններին,

գ) մասնակցում է ռազմական գործողություններին՝ ղեկավարվելով անձնական շահ ստանալու ցանկությամբ, որին կոնֆլիկտի մեջ գտնվող կողմից կամ այդ կողմի հանձնարարությամբ տրվել է այնպիսի նյութական վարձատրության խոստում, որն էապես գերազանցում է այն վարձատրությունը, որը խոստացվում կամ վճարվում է տվյալ կողմի զինված ուժերի կազմի մեջ մտնող՝ այդ նույն դասի և գործառնություններն իրականացնող մարտիկին,

դ) չի հանդիսանում կոնֆլիկտի մեջ գտնվող կողմի քաղաքացին, ոչ էլ կոնֆլիկտի մեջ գտնվող կողմից վերահսկվող տարածքում մշտապես բնակվող անձ,

ե) կոնֆլիկտի մեջ գտնվող կողմի զինված ուժերի անձնակազմի անդամ չէ,

զ) ուղարկված չէ այն պետության կողմից, որը չի հանդիսանում կոնֆլիկտի մեջ գտնվող կողմ, որպես նրա զինված ուժերի կազմի մեջ մտնող անձ՝ պաշտոնական պարտականությունները կատարելու համար:

UN Human Rights Office of the High Commissioner, “International Convention against the Recruitment, Use, Financing and Training of Mercenaries”, adopted 04 December 1989 by



անտեսելով այն հանգամանքը, որ վարձվելուց հետո դեպքերի ճնշող մեծամասնությամբ, այդ զինյալը մտնում կամ, ավելի ճիշտ, ներգրավվում է ջոկատի, խմբի կամ որևէ այլ կազմավորման մեջ: Սա նշանակում է, որ վարձկանությունը ինստիտուցիոնալացվում է վարձողի կողմից, սակայն այդ վարձողի դերը և հատկանիշները միջազգային օրենքներում և որոշումներում շատ աղոտ են ձևակերպվում: Կարելի է ենթադրել, որ դա տեղի է ունենում «վարձողների» հակազդեցության և լոբբինգի հետևանքով<sup>20</sup>:

Կարելի է եզրակացնել, որ վարձկանության պատմությունն այնքան հին է, որքան հին են պետական կամ կվազիպետական ինստիտուտները, քանի որ միայն նման կառույցները, սակավ և աննշան բացառություններով, կարող էին ունենալ վարձկանությունը կազմակերպված ձևով կիրառելու ձևակերպված նպատակ և միջոցներ:

Սակայն ինչու՞ հենց վարձկաններ: «Պատճառը պարզ է՝ ուժ վարձելը ավելի էժան է, քան սեփականն ունենալը: Մշտական կանոնավոր բանակի պահպանումն այսօր նորմալ է թվում, բայց դա այդպես չէ: Սեփական զինված ուժերի համար վճարելը չափազանց թանկ է և նման է մասնավոր ինքնաթիռ ունենալուն, այն դեպքում երբ անհրաժեշտության դեպքում կարելի է ինքնաթիռի տոմս գնել: Ինչո՞ւ ներդրումներ կատարել սեփական թանկարժեք մշտական

---

General Assembly resolution 44/34, <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-convention-against-recruitment-use-financing-and>.

<sup>20</sup> Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեային 1988-ի հոկտեմբերի 3-ին ներկայացվել է հատուկ ցեկույց, որն անդրադառնում է պետությունների, կազմակերպությունների և այլ սուբյեկտների պատասխանատվության հարցին, քանի որ վարձկանությունը խոչընդոտում է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքին: “The impact of Mercenary Activities on the Right of Peoples to Self-determination”, Fact Sheet No. 28, <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Publications/FactSheet28en.pdf>, part 5.

բանակը պահելու և զաարգացնելու համար, երբ կարող ես պարզապես վարձել»,<sup>21</sup>,- բացատրում է Շոն Մաքֆեյթը<sup>21</sup>:

### **Վարձկանության ձևավորումը. պատմական ակնարկ**

Վարձկանության պատմությունը վկայում է այն մասին, որ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը միշտ էլ եղել է կազմակերպված, զինված և մարտունակ ջոկատների պահանջարկ: Վարձկանների նկատմամբ վերաբերմունքը եղել է իրավիճակային, կախված նրանից, թե ով էր գնահատում:

Օրինակ, Եգիպտոսի բանակներում սկսած հնագույն ժամանակներից միշտ ծառայել են հարևան ժողովուրդներից և ցեղերից հավաքագրված զինվորներ, որոնք վարձ էին ստանում, սակայն մարզվում էին եգիպտական բանակի սպաների կողմից: Նրանց առանձին ջոկատների մեջ էին միավորում, քանի որ բուն եգիպտացի զինվորների վերաբերմունքը նրանց նկատմամբ բացասական էր<sup>22</sup>, քանի որ հզոր պետական բանակի քաղաքակիրթ զինվորները ցեղերից հավաքագրած վարձկաններին համարում էին վայրենիներ: Հակառակը, պետությունը որպես վարձող, նրանց արդյունավետությունը բարձր էր գնահատում: Հասկանալի է, որ այս վարձկանների օգտագործումը չի կարելի բնութագրել որպես վարձկանություն, քանի որ նրանց խմբերը չէին կազմում բանակային համակարգից դուրս առանձին կազմակերպված միավորներ:

---

<sup>21</sup> Sean McFate, “Mercenaries and War: Understanding Private Armies Today”, *National Defense University Press*, February 7, 2018, 61, <https://ndupress.ndu.edu/Media/News/Article/2031922/mercenaries-and-war-understanding-private-armies-today/>.

<sup>22</sup> Anthony Spalinger, *War in Ancient Egypt*, (Malden, MA: Blackwell Publishing, 2005), 6-8.

Բոլորովին այլ երևույթ է Քսենոֆոնի «Անաբասիսում» ներկայացված հույն վարձկանների պատմությունը՝ մեկ տարի երեք ամիս տևած վերադարձը Հունաստան: Պարսից արքա Դարեհ 2-ի կրտսեր որդի Կյուրոսը (հայտնի է որպես Կյուրոս Կրտսեր, մահացել է մթա 401 թ.) իր եղբոր դեմ կռվելու համար վարձել էր 11 հազար հույլիտներ և 2 հազար օժանդակ հետևակայիններ, որոնք մասնակցեցին Կունակսի ճակատամարտին: Մարտում պատահական նիզակի հարվածից Կյուրոսի սպանվելուց հետո հույների հրամանատարները որոշում ընդունեցին վերադառնալ հայրենիք, ինչն էլ կարողացան իրականացնել հաղթահարելով դժվարություններ, կռվելով թշնամիների դեմ և կորուստներ տալով: Քսենոֆոնի ստեղծագործությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում այս բավականին մեծ վարձկանների բանակի կառուցվածքի, կազմակերպման, կառավարման, զենք ու զրահի և այլ կարևոր հանգամանքների մասին<sup>23</sup>:

Այս տեղեկությունները թույլ են տալիս առանձնացնել վարձկանության պատմության առաջին փուլը, որի առանձնահատկությունները հետևյալն են.

ա) ընդհանուր պայմանագիր, որը կնքվում է վարձողի և վարձկանների հրամանատարության միջև, այլ ոչ թե յուրաքանչյուր վարձկանի հետ առանձին,

բ) վարձկանների խմբի, ջոկատի, բանակի ներքին ռազմական հիերարխիայի հստակ համակարգ, սպայական և ենթասպայական դասերի ձևավորում,

գ) զենքի և սպառազինության միանմանություն,

դ) մարտի դաշտում գործողությունների մշակված հստակ և փորձարկված մարտավարություն,

<sup>23</sup> Քսենոֆոն, *Անաբասիս*, թարգմ. Ս. Կրկաշարյանի, (Երևան, 1970):

ե) ստորաբաժանման ներսում կնքված պայմանագրեր, այսինքն՝ հրամանատարը առանձին պայմանագիր էր կնքում յուրաքանչյուր զինվորի հետ:

### **Ֆեոդալական աշխարհագրից ասպետական հեծելագոր. վարձկանությունը միջնադարում**

Միջնադարը մարդկության պատմության ամենահետաքրքիր և բազմաբնույթ շրջաններից է, այն շատ երկար և հակասական է, որպեսզի հնարավոր լինի նույնիսկ այնպիսի հատուկ նյութի մասին, ինչպիսին վարձկանությունն է, լիարժեք և գոնե ինչ որ չափով ամբողջական շարադրանք ձևավորել: Սակայն այնուամենայնիվ կարելի է վարձկանության զարգացման ընդհանուր միտումների և առանձնահատկությունների մասին պատկերացում կազմել:

Վաղ միջնադարի համար հատուկ են ֆեոդալական ջոկատներից և գյուղացիական աշխարհագրից կազմված բանակները, որոնք պիտանի չէին երկարատև պատերազմներ վարելու համար, քանի որ, բացի ռազմական պարտավորություններից, նրանք ունեին բազմաթիվ այլ գործունեության ոլորտներ, այն է. հասարակական, տնտեսական, կարգ ու կանոնի պահպանման և այլն: Պարզ է, որ խոսքն այստեղ վերաբերվում է ընդհանուր միտումներին, սակայն կարելի է արձանագրել, որ պատմության այս ժամանակահատվածում վարձկանների մասնակցությունը ավելի հազվադեպ էր:

Երկրորդ փուլի համար շատ կարևոր գործոն հանդիսացավ նոր զենքի և զորատեսակների ի հայտ գալը: Ֆիլիպ Կոնտամինը շատ հատկանշական օրինակով է լուսաբանում նոր տիպի բանակի ձևավորման հրամայականը: 718 թ. արաբական գնդերը անցան Պիրենեյան լեռները և ներխուժեցին ֆրանկների թագավորություն: Կարլ Մարտելը, որն այդ ժամանակ իրական կառավարիչն

էր, պետք է այդ ներխուժումը կանգնեցնելու համար միջոց գտներ: Խնդիրը բարդ էր երկու հիմնական պատճառով. ա) թագավորական կալվածքները չէին բավարարում նոր հողաբաժիններ հատկացնել զինվորներին նրանց պարգևատրելու համար և բ) ֆրանկների հետևակը ի վիճակի չէր արաբների հեծելազորի դեմ հաջողությամբ կռվել: Այս խնդիրները լուծելու համար, նա եկեղեցական կալվածքները աշխարհիկացման ենթարկեց, և հայտարարեց, որ այսուհետև պատերազմ է գնալու ոչ թե ազատ ֆրանկների աշխարհագորը, այլ միայն այն զինվորները, որոնք կներկայանան հեծյալի ամբողջական զենքով և սպառազինությամբ: Այդ ամենը այն ժամանակ իր արժեքով հավասար էր 45 կովի գնին: Հեծյալներին եկեղեցիներից խլած հողերից հատկացվեցին հողաբաժիններ, բայց միայն, քանի նրանք ծառայության մեջ էին: Այս բարեփոխությունը ստացավ բենեֆիցիալ ռեֆորմ անվանումը: 732 թ. Պուատյեի ճակատամարտում Կարլ Մարտելի բանակը կանգնեցրեց արաբներին<sup>24</sup>:

Այս իրադարձությունները կարելի է համարել շրջադարձային միջին դարերի ռազմական պատմության համար: Այսպիսով հիմք դրվեց ասպետական հեծելազորին հատկապես, երբ եվրոպացիները 9-րդ դարի վերջին սկսեցին օգտագործել ասպանդակները: Ասպետական հեծելազորի առավել փառավոր շրջանը 12-13-րդ դարերն են, երբ ասպետական միաբանությունները մասնակցում էին խաչակրաց արշավանքներին: Այդ շրջանի եվրոպական հասարակություններում ձևավորվում է մեզ լավ ծանոթ ազնիվ, խիզախ, հպարտ և պատվավոր ասպետի կերպարը: Ճիշտ է,

---

<sup>24</sup> Կարևոր է, որ հեղինակը շեշտում է ֆրանկների բանակում հետևակի մեծամասնություն կազմելը:  
Philippe Contamine, *War in the Middle Ages*, (New York: 2013), 141-144.

Ֆեոդալական մասնատվածության խորացման հետ ի հայտ եկան բազմաթիվ ավագակ ասպետներ և այս կերպարը սկսեց խամրել:

Վաղ միջնադարի պայմաններում նատուրալ տնտեսությունը, քաղաքների և առևտրի անկումը գրեթե անհնար էր դարձրել կանոնավոր գորքի գոյությունը, ինչը պարտադրում էր բանակների կազմավորման համար կիրառել վասալական և աշխարհագրային մոդելը: Սակայն արդեն 14-15-րդ դարերում քաղաքների աճը և հարստանալը, արհեստների և առևտրի զարգացումը որպես արդյունք հանգեցրին կարգապահ քաղաքային աշխարհագրների, ինչպես նաև արհեստավարժ վարձկաններից ձևավորված հատուկ ստորաբաժանումների ստեղծմանը<sup>25</sup>:

Սահմանափակ ֆինանսական հնարավորություններով բազմաթիվ փոքր և միջին չափերի իշխանությունների, կոմսությունների, եպիսկոպոսությունների և ազատ քաղաքների ի հայտ գալը բացատրում է այդ շրջանի գորքերի փոքրաքանակ լինելը: Այս հանգամանքը հասկանալի է դարձնում իտալական կոնդոտյերների, գերմանական լանդսկնեխտների և ռիտտերների, շվեյցարական վարձկանների լայն կիրառումը: Վարձկանությունը ոչ միայն չի դատապարտվում. այն համարվում է բավականին պատվաբեր մասնագիտություն: Հարկ է նշել, որ այս շրջանում վարձկանների ինքնության հարցը դեռ չի կարևորվում, նրանք ընկալվում են պարզապես որպես վճարի դիմաց ծառայող արհեստավարժ զինվորականներ<sup>26</sup>:

Կարելի է վստահորեն արձանագրել, որ վարձկանների ինքնության հարցը կարևորություն է ձեռք բերում միայն 17-րդ դարի

<sup>25</sup> Այս հարցերին է նվիրված Ֆիլիպ Կոնտամինի աշխատության ամբողջ չորրորդ գլուխը: Ծատ մանրամասն և հիմնավորված կերպով 12-րդ դարից սկսած ներկայացվում է պետության, հասարակության, տնտեսության առանձնահատկությունների, բանակի կազմավորման սկզբունքների և միջնադարյան վարձկանության յուրահատկությունների փոխկապակցվածությունը և փոխազդեցությունը: Philippe Contamine. *War in the Middle Ages*, (New York: 2013).

<sup>26</sup> John Keegan, *A History of Warfare*. (New York, 1993), 231.

կեսերից, երբ ձևակերպվեցին Վեստֆալյան համակարգի սկզբունքները, որոնցից մեկը՝ ինքնիշխանությունը՝ որպես իրեն հակադրվող հասկացություն ծնում է «օտարականություն»-ը<sup>27</sup>:

Ինքնիշխան պետության հպատակները կամ քաղաքացիները, նույնիսկ եթե վճարվում են իրենց զինվորական ծառայության համար, չեն համարվում վարձականներ: Այսուհետև վարձկան են միայն «օտարականներ»-ը, օտար հպատակները կամ քաղաքացիները: Ռազմական պատմաբան Ստեֆան Մորիլյոն այս ձևակերպմանը ավելացնում է ևս մեկ կարևոր հանգամանք, այն է. որքանով են «օտար» վարձկանները ընդգրկված կամ ներգրավված (embedded) տվյալ հասարակության սոցիալական համակարգերի մեջ<sup>28</sup>:

Օրինակ, Շվեյցարիայում միջնադարում վարձկանները պայմանագրի էին կնքում երկու-երեք ամսով, կատարում էին իրենց պարտավորությունները ըստ այդ պայմանագրի և, ստանալով իրենց վաստակածը, վերադառնում էին իրենց բնակավայր: Ակնհայտ է, որ որևէ սոցիալական ներգրավվածության մասին խոսք չէր կարող լինել:

Նույնը կարելի ասել 44-օրյա պատերազմին Ադրբեջանի վարձած սիրիացի զինյալների մասին, որոնք հավաքագրվեցին հիմնականում Իդլիբի ճամբարներից, բերվեցին Արցախ որպես վարձկան զինվորներ, ապա վերադարձան իրենց ճամբարները:

Միջնադարյան վարձկանության պատմությունն ավարտվում է 18-րդ դ. վերջում, երբ ֆրանսիական հեղափոխությունը՝ հռչակելով որպես նոր հասարակության արժեքներ «Ազատություն, Եղբայրություն, Հավասարություն» սկզբունքները, հայտարարեցին

---

<sup>27</sup> Stephen Morillo, “Mercenaries, Mamluks and Militia: Towards a Cross-Cultural Typology of Military Service”, *Medieval Mercenaries* (2007), 243-260.  
[https://www.academia.edu/449307/Mercenaries\\_Mamluks\\_and\\_Militia\\_Towards\\_a\\_Cross-Cultural\\_Typology\\_of\\_Military\\_Service](https://www.academia.edu/449307/Mercenaries_Mamluks_and_Militia_Towards_a_Cross-Cultural_Typology_of_Military_Service):

<sup>28</sup>Նույն տեղում:

նան, որ հայրենիքի պաշտպանությունը բոլոր քաղաքացիների սրբազան պարտքն է: Այս կարգախոսով էլ հեղափոխական Ֆրանսիայում առաջին անգամ կազմակերպվեց համընդհանուր գորահավաք:

### **Կանոնավոր բանակներն ու վարձկանությունը ժամանակակից փուլում**

Տեխնոլոգիաների՝ երկաթգծերի, հեռագրակապի, ռազմարդյունաբերության նոր համակարգի և այլնի զարգացումը թույլ տվեց պետություններին կանոնավոր բանակի հետ միասին ունենալ և մոբիլիզացիոն ռեսուրսներ, որոնք արդեն հնարավոր էր արագ զինակոչել, կազմակերպել, արագ սովորեցնել և համալրել կռվող բանակը: Առաջին անգամ «մոբիլիզացիա» եզրույթը կիրառվում է 19-րդ դ. կեսերին Պրուսիայում:

Կանոնավոր բանակները և մոբիլիզացիան երկար ժամանակով վարձկանությունը դարձրեցին լուսանցքային երևույթ: Այն նորից դարձավ պահանջված ապագադության ման շրջանում, երբ իրենց ազատ ինքնորոշման իրավունքը իրացնող ապստամբած ժողովուրդների դեմ գողութաբարները ուղարկեցին «հաջողության զինվորների» նոր հրատարակությունը: Երևի հենց այս ժամանակ է սկսվում վարձկանության պատմության նոր փուլը:

Վարձկանության պատճառների մեջ ներկայումս հետազոտողները ավելացնում են նաև քաղաքական, էթնիկ, կրոնական և այլ համգամանքներ, ինչը փորձ է որոշակի գաղափարական սկզբունքներ ավելացնել այս երևույթի հիմնավորումների մեջ: Իմ դիտարկմամբ՝ տարբեր տիպի գաղափարների ազդեցության տակ այլ երկրներում կռվող «օտարականների» համար ֆինանսական գործոնը էական



նշանակություն չի կարող ունենալ, ուստի նրանց վարձկան համարելը սխալ կլինի: Իրարից սկզբունքորեն տարբեր մոտեցումներ է պահանջում հետազոտությունը այն կամավորների պատմությունների, որոնք, օրինակ, 20-րդ դարի սկզբին մեկնում էին հարավային Աֆրիկա, որպեսզի բուրերի բանակում կռվեն անգլիացիների դեմ և այն վարձկանների պատմությունների, որոնք Բոբ Դենսարի, Ռոժե Ֆոյլի և այլ հայտնի հրամանատարների<sup>29</sup> ղեկավարությամբ որպես վարձկաններ կռվում էին նույն դարի 60-ական թվականներին Կոնգոյում՝ խոչընդոտելով այս երկրի ժողովրդին իրականացնել իր ազատ ինքնորոշման իրավունքը:

Այս փուլի առավել կարևոր առանձնահատկությունը հետազոտողները համարում են այն հաճախ քննարկվող և վիճարկվող հանգամանքը, որ պետությունը կորցնում կամ զիջում է բռնություն իրականացնելու իր մենաշնորհը<sup>30</sup>:

Վերջին տասնամյակներում հաճախ է օգտագործվում ՄԶԸ հապավումը (մասնավոր զինվորական ընկերություն, անգլերեն՝ PMC, ռուսերեն՝ ЧВК): 20-րդ դարի երկրորդ կեսից մասնավոր զինվորական ընկերությունները բավականին հաճախ են պայմանագրային կարգով իրենց ծառայությունները մատուցել մի

---

<sup>29</sup>Jeffrey Pickering, Emizet Kisangani, “Political, Economic, and Social Consequences of Foreign Military Intervention”, *Political Research Quarterly* Vol. 59, No. 3 (Sep., 2006), 363-376.

[https://www.jstor.org/stable/4148037?searchText=bob%20denard&searchUri=%2Faction%2FdoBasicSearch%3FQuery%3Dbob%2Bdenard&ab\\_segments=0%2FSYC-6704\\_basic\\_search%2Fcontrol&refreqid=fastly-UUdefault%3A5df9a74a3afbd2892f46987b333fd640](https://www.jstor.org/stable/4148037?searchText=bob%20denard&searchUri=%2Faction%2FdoBasicSearch%3FQuery%3Dbob%2Bdenard&ab_segments=0%2FSYC-6704_basic_search%2Fcontrol&refreqid=fastly-UUdefault%3A5df9a74a3afbd2892f46987b333fd640)

<sup>30</sup> Anna Leander, “The Paradoxical Impunity of Private Military Companies: Authority and the Limits to Legal Accountability”, *Security Dialogue* 41(2010), 467–490. Линдсей Камерон, “Частные военные компании: их статус по международному гуманитарному праву и воздействие МГП на регулирование их деятельности”, *Международный журнал Красного креста*. Том 88. № 863, (2006). Lindy Heinecken, “Outsourcing Public Security: The Unforeseen Consequences for the Military Profession”, *Armed Forces & Society*. 40 (2014), 625–646.

Charles Moskos, “From Institution to Occupation: Trends in Military Organization”, *Armed Forces & Society*, Vol. 4. (1), (1977), 41–50.

շարք պետություններին և կորպորացիաներին և, լուծելով տարբեր տիպի խնդիրներ, սկսած մարտական գործողություններին ուղղակի մասնակցելուց մինչև ոստիկանական ֆունկցիաներ կատարելը, բռնություն են իրականացրել: Համարվում է, որ մեր ժամանակներում առաջին նման ընկերությունը՝ Ոթչգարդ Ինթերնեյշնլը՝ 1967 թ. ստեղծել է բրիտանական բանակի գնդապետ Դեյվիդ Սթերլինգը<sup>31</sup>: Այս ընկերության հիմնական խնդիրն ի սկզբանե Միացյալ Թագավորությանը բարեկամ երրորդ աշխարհի երկրների անվտանգային անձնակազմը մարզելն էր, սակայն 1970-ից Ստերլինգը պայմանագրեր կնքեց և ներգրավվեց նաև այլ պետությունների սահմաններում ընթացող ռազմական գործողություններին:

Կարևոր է այն հանգամանքը, որ ՄՁԸ-ները իրենց ծառայությունները մատուցում են ճիշտ միջնադարյան վարձկանների ջոկատների նման՝ շահավետության սկզբունքով: Այս առումով շատ հետաքրքիր է հայտնի Բլաքվոթեր ՄՁԸ-ի հիմնադիր ԱՄՆ Հանրապետական կուսակցության կարկառուն ներկայացուցիչ Էրիկ Փրինսի գործունեությունը: Է. Փրինսը՝ Բլաքվոթերը վաճառելուց հետո Հոնգքոնգում հիմնեց Ֆրոնթիր Սերվիս Գրուպի ընկերությունը և ակտիվորեն համագործակցում էր ԱՄԷ-ի, Չինաստանի, մի շարք աֆրիկյան պետությունների հետ: Չինական կառավարության հետ նրա համագործակցությունը բավականին լայն բնույթ ունի, սակայն հատկապես հետաքրքիր է Մինձյան Ույգուրական Ինքնավար շրջանում նրա գործունեությունը, որտեղ նա անտեսում էր աշխարհաքաղաքական

<sup>31</sup> Vladimir Ryzhov, “David Stirling, Special Air Service and PMC Watchguard International”, *Top War*, <https://en.topwar.ru/172493-djevid-stirling-special-air-service-ichvk-watchguard-international.html>.

և գաղափարական բոլոր նկատառումները՝ միայն բիզնես շահերով առաջնորդվելով<sup>32</sup>:

Իմ պատկերացմամբ՝ թվային քաղաքակրթական համակարգում պետության և կառավարման պետական կադապարի փոփոխմանը համընթաց ցանցայնացվում են և աութօրսի միջոցով են սկսում իրականացվել պետության այն ֆունկցիաները, որոնք պահանջում են մեծ և հիերարխիկ բյուրոկրատական ապարատ՝ վերերյան իմաստով: Այսինքն, պետությունը աստիճանաբար ստանձնում է գլխավոր մենեջերի դերակատարությունը՝ բաշխելով պատվերները առավել հարմար և մասնագիտացված մասնավոր գործակատարների միջև: Ակնհայտ է, որ ռազմավարական ոլորտներում նման աութօրսինգը բավականին վտանգավոր է, հարուցելով բազմաթիվ հարցեր, միննույն ժամանակ առաջացնում է լուրջ դիմադրություն: Սակայն ժամանակակից պատերազմը և զինատեսակները այնքան տեխնոլոգիաներով հագեցած են, որ պահանջում են հատուկ մասնագիտացում ունեցող մարդկանց հավաքագրում:

Ինչևէ, վարձկանությունը կա և հետզհետե ավելի և ավելի մեծ դեր է կատարելու լեգիտիմացված բնություն իրականացնելու ոլորտում: Ակնհայտ է, որ այն բոլոր օրենքները և որոշումները, որոնք կանոնակարգում են ժամանակակից վարձկանությունը, պետք է վերանայվեն և հարմարեցվեն նոր պայմաններին՝ կանխելով, նախևառաջ, վարձականների ձեռքով կատարվող ռազմական հանցագործությունները:

## THE TRANSFORMATION OF MERCENARISM

<sup>32</sup> Эмиль Сайфуллин, “ЧВОК — приватизация войны или инструмент государства?”, *Российский совет по международным делам*, <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/chvok-privatizatsiya-voyny-ili-instrument-gosudarstva/>.

**FROM ITS ORIGIN TO THE PRESENT**

*Davit Hovhannisyan*

*Shushan Kyureghyan*

**Abstract**

The article aims to present the phenomenon of "mercenarism" in the context of historical developments and to show how the essence of mercenarism and its perception has been changing since its emergence. The article specifically mentions that mercenary activities started in ancient times and have reached our days with certain transformations. For centuries, it served to solve specific problems and was considered not only a natural but often an honorable activity. The article discusses the specifics of mercenarism in different periods of history, changes in recruitment methods and the legality of mercenaries' and employers' actions. The research also examines the scope of international laws condemning the phenomenon of mercenarism and the need for their revision.

**ՎԱՐՁԿԱՆՆԵՐՆ ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ.  
ԹԱՔՎԻՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԸ՝ ՈՐՊԵՍ  
ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼՔՆ ՈՒ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԸ ՄԻԱՎՈՐՈՂ  
ԳՈՐԾՈՆ՝**

Աննա Գևորգյան<sup>2</sup>

DOI 10.56673/18294502-22.15-53

Ներկայացվել է՝ 17 Սեպտեմբեր 2022

Ընդունվել է՝ 29 Նոյեմբեր 2022

***Բանալի բառեր՝** վարձկաններ, Ղարաբաղյան հակամարտություն, Իրան, տարածաշրջան, Մերձավոր Արևելք, Հարավային Կովկաս, թաքֆիրի*

*Իրանի մերձավորարևելյան քաղաքականությանը վերաբերող քաղաքական խոսույթում առանցքային տեղ ու դեր է գրավում թաքֆիրական խմբերի դեմ պայքարը: Այս պայքարի վրա էր խարսխվում Իրանի՝ մերձավորարևելյան հակամարտություններում ներգարվվածության իսլամաքաղաքական հիմնավորումը: 2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի ընթացքում ու պատերազմից հետո կրոնաքաղաքական այս կառուցարկը ներթափանցեց նաև Իրանի հարավկովկասյան քաղաքական խոսույթի մեջ. թաքֆիրական խմբեր էին/են անվանվում Ադրբեջանի կողմից օգտագործված սիրիացի վարձկանները: Հոդվածում կանդրադառնանք Իրանի՝*

<sup>1</sup> Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-5F251 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

<sup>2</sup> «Քաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն» հիմնադրամի ծրագրերի ղեկավար, հետազոտող: Էլ. փոստ՝ anna.gevorgyan@ysu.am

*Ղարաբաղյան պատերազմի արձագանքների՝ վարձկաններին վերաբերող հատվածին՝ որպես հարավկովկասյան ու մերձավորարևելյան տարածաշրջանները միմյանց կապող գործիքի:*

### ***Իրանի՝ տարածաշրջանային քաղաքականությունը***

Հարավային Կովկասի ու Մերձավոր Արևելքի փոխկապվածության մասին խոսում է նախևառաջ այս տարածաշրջանների աշխարհագրական դիրքը<sup>3</sup>: Բայց քաղաքական, գաղափարական ու նաև տնտեսական առումով այս տարածաշրջանները միշտ չէ, որ սերտ համագործակցություն կամ փոխազդեցություն են ունեցել: Էներգետիկ ենթակառուցվածքների փողջադկապվածությունն ու ընդհանուր աշխարհաքաղաքական տրամաբանությունն, իհարկե, հաճախ հուշում էր, որ այս տարածաշրջաններն առանձին դիտարկելիս եզրահանգումներում սխալանքի ավելի մեծ հավանականություն կա<sup>4</sup>:

2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի արդյունքում փորձագիտական շրջանակներում ավելացան վերլուծություններն այն մասին, որ հարավկովկասյան տարածաշրջանը ավելի սերտորեն է կապվում միջին Արևելքի հետ: Այդպիսի վերլուծությունների համար հիմք էին հանդիսանում Թուրքիայի՝ տարածաշրջանում ներգրավվածության ավելացումը, Թուրքիա-Ռուսաստան երկխոսության կարևորության շեշտադրումը դարաբաղյան հակամարտության լուծման մեջ, ինչպես նաև

<sup>3</sup> Lincoln Mitchel, *The Caucasus and the Middle East*, The Caucasus and the Middle East | Middle East Institute (mei.edu), Մուսը՝ 10.09.2022

<sup>4</sup> Natia Chankvetadze, Ketevan Murusidze, *The ties that bind: The South Caucasus and the Middle East*, The ties that bind: The South Caucasus and the Middle East | Middle East Institute (mei.edu), Մուսը՝ 12.09.2022

արտատարածաշրջանային ուժերի ենթադրյալ ներգրավվածության մասին ավելի հաճախակի դարձած հիշատակումները: Հայաստանն ու Ադրբեջանը մինչև Ղարաբաղյան երկրորդ պատերազմն էլ զգայուն էին միջինարևելյան քաղաքական զարգացումներով, դրանց անմիջական ազդեցությունը զգալու տեսանկյունից<sup>5</sup>:

Պատերազմի վերաբերյալ Իրանի արձագանքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրա՝ Հարավային Կովկասում վարձկանների առկայության մասին ձևակերպումները նույնպես Հարավային Կովկասը Միջին Արևելքի հետ փախկապակցելու ցուցիչ կարող են լինել: Զարգացումները Հարավային Կովկասում Միջինարևելյան քաղաքականությանը հատուկ բառամթերքով անվանելու պրակտիկան դրա ապացույցն է:

Իրանի համար տարածաշրջանում վերսկսված պատերազմի հին ու նոր մարտահրավերներ էին համարվում՝

□ Պատերազմական գործողությունների՝ անմիջապես իր սահմաններին մոտ լինելը,

□ Թուրքիայի՝ հնարավոր աճող դերը տարածաշրջանում,

□ Արտատարածաշրջանային ուժերի հնարավոր մասնակցությունը,

□ Վարձկանների գոյության փաստը, որ համարվում էր երկրորդ ու երրորդ կետերում նշված փաստերի հետևանք:

Այս մարտահրավերները նույնական կարելի է համարել Միջին Արևելքում Իրանի ունեցած անվտանգության

<sup>5</sup> Mickael B. Bishku, “The South Caucasus Republics and the Muslim Middle East: Political and Economic Imperatives“, *Mediterranean Quarterly*, Vol. 21, No. 3 (Summer 2010), pp. 26-46

մարտահրավերների հետ: Միջինարևելյան որևէ երկրում իր՝ պրոքսի ուժերի միջոցով հակամարտությունների ներգրավվածությունը, ինչպես նաև Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի Ղոդսի ուժերի ներգրավվածությունը Իրանի պաշտոնական շրջանակները բացատրել են այդ հակամարտությունների՝ իրենց սահմաններին մոտ լինելու հանգամանքով: Իրանի դիտանկյունից, եթե իրանական զինված ուժերը չօգնեն չեզոքացնել արաբական երկրներում տեղի ունեցող զարգացումները, դրանք կտեղափոխվեն երկրի սահմաններից ներս՝ ֆիզիկական վտանգ առաջացնելով Իրանի քաղաքացիների համար: Այս մոտեցումն ու ձևակերպումը առկա է ինչպես Իրանի Հոգևոր Առաջնորդի ելույթներում, այնպես էլ նախկին ու ներկա նախագահների ու ԻՀՊԿ ներկայացուցիչների ելույթներում ու ճառերում:

2020 թվականի Ղարաբաղյան պատերազմի ավարտին ստորագրված զինադադարի մասին հայտարարությունը նույնպես մարտահրավերներ է պարունակում Իրանի անվտանգության քաղաքականության համար: Այդ մարտահրավերները սնում են հետևյալ մտահոգությունները՝

□ Ռուս-թուրքական համատեղ ուժերով հարցի «կարգավորման» փաստը նսեմացնում է Իրանի դերը՝ որպես տարածաշրջանային տերություն,

□ Նոյեմբերի 10-ի հայտարարության մեջ ամրագրված կոմունիկացիաների ապաշրջափակումը կարող է կենտրոնանալ բացառապես Արևելք-Արևմուտք կապի վրա՝ ռիսկի ենթարկելով Հյուսիս-Հարավ՝ Իրանի համար այնքան կարևոր ուղեգիծը,



□ Թուրք-ադրբեջանական աճող սերտ համագործակցությունը կարող է մեծացնել նաև պանթյուրքական սպառնալիքը Իրանի անվտանգության համակարգի համար:

Միջինարևելյան հակամարտությունների համատեքստում Իրանի համար կարևոր է նաև Թուրքիայի՝ ռեգիոնալ տերություն ու «իսլամական» աշխարհի առաջնորդ դառնալու մղումները սանձելն ու հնարավոր այլընտրանք ձևավորելը<sup>6</sup>: Իսլամական աշխարհի՝ աշխարհիկ կամ կրոնական պետության օրինակ լինելու ձգտումը երկու պետություններին դարձնում է հակընդդեմ քաղաքական մոդելների պայքարի առաջամարտիկներ ու որոշակիորեն ստվերում տնտեսության ոլորտում ունեցած սերտ համագործակցությունը<sup>7</sup>:

Թուրքիայի հետ հարաբերությունների կեսհակառակորդ-կեսգործընկեր բնույթը<sup>8</sup> որոշակիորեն բալանսավորվում է տարածաշրջանում երրորդ ուժի՝ Ռուսաստանի ներկայությամբ<sup>9</sup>: Այսպես, Սիրիայում ունեցած տարածայնությունները որոշակի ինստիտուցիոնալ կերպափոխման են ենթարկվում Աստանայի ձևաչափի<sup>10</sup> շնորհիվ՝ ներառելով Իրանի, Թուրքիայի ու

<sup>6</sup> Shireen t. Hunter, *Iran's Foreign Policy in the Post-Soviet Era: Resisting the New International Order*, (ABC-CLIO, 2010), p.161, Shireen T. Hunter - Iran's Foreign Policy in the Post-Soviet Era\_ Resisting the New International Order (2010) (3).pdf

<sup>7</sup> Fiona Hill, “Seismic shifts in Eurasia: The changing relationship between Turkey and Russia and its implications for the South Caucasus”, *Southeast European and Black Sea Studies*, 3(3), 55–75. doi:10.1080/14683850412331321648, p. 60

<sup>8</sup> Shireen t. Hunter, *Iran's Foreign Policy in the Post-Soviet Era: Resisting the New International Order*, (ABC-CLIO, 2010), p.156, Shireen T. Hunter - Iran's Foreign Policy in the Post-Soviet Era\_ Resisting the New International Order (2010) (3).pdf

<sup>9</sup> Stephen J.Flanagan, “The Turkey–Russia–Iran Nexus: Eurasian Power Dynamics”, *The Washington Quarterly*, 36(1), 163–178. doi:10.1080/0163660x.2013.751656, p.166

<sup>10</sup> *The Astana Process and the Future of peaceful Settlement of the Syrian Crisis: A Status Note*, The Astana Process and the Future of Peaceful Settlement of the Syrian Crisis: A Status Note - Indian Council of World Affairs (Government of India) (icwa.in)

Ռուսաստանի հաճախ հակընդդեմ, բայց նաև փոխլրացնող շահերը: Թեև միջինարևելյան համատեքստում պանթյուրքականության մասին խոսելու հիմքեր չկան, բայց այստեղ էլ ի հայտ են գալիս սուննիական համագործակցության տարրեր, որոնց դեմ պայքարն ու հակազդեցությունը նույնպես Իրանի անվտանգության քաղաքականության կարևոր բաղադրիչ է: Այստեղ պետք է շեշտադրել, սակայն, որ սուննիականության տարաբաժանման արդյունքում է, որ Իրանը փորձում է մի կողմից պահպանել համախլամական սկզբունքների ու արժեքների հանդեպ հավատարմությունն ու այդ արժեքների պահպան առաջնորդը լինելու ձգտումը, մյուս կողմից պայքար է մղում այն բոլոր սուննի ծայրահեղական ուժերի ու խմբավորումների դեմ, որոնք, ըստ իրանական քաղաքական իսլամի մեկնաբանության՝ աղերս չունեն իսլամի ու իսլամականության հետ, այլ ստեղծվել են արևմտյան ուժերի կողմից նույն այդ իսլամական աշխարհը ջլատելու ու ապականելու համար: Իսկ Հարավային Կովկասում Իրանի ու Թուրքիայի մրցակցությունը նորագույն ժամանակներում սկսել է անմիջապես ԽՍՀՄ փլուզումից ու հարավկովկասյան պետությունների անկախացումից հետո<sup>11</sup>:

Արտատարածաշրջանային ուժերի խնդիրը Իրանի ազգային անվտանգության հիմնական խնդիրներից մեկն է համարվում: Իրանն ազգային անվտանգության ռազմավարություն չունի ու նրա հիմնական դրույթները դիսկուրսիվ վերլուծության միջոցով միայն կարելի է նույնականացնել: Այդ դիսկուրսն ինքը խարխսված է «օտար» ուժերի՝ տարածաշրջանում ապակայունություն

---

<sup>11</sup>Svante E Cornell, “Iran and the Caucasus”, *Middle East Policy*, (Washington), Vol. 5, Iss. 4, p.51, (Jan 1998)

սերմանելու ու դրա դեմ բոլոր հնարավոր միջոցներով պայքարելու դրույթների վրա: Օտարի և դրա ամենից տարածված մարմնացման՝ ԱՄՆ-ի ու Իսրայելի դեմ պայքարը Իրանի քաղաքական ինքնության անբաժանելի մասն է, նրա անվտանգության քաղաքականության կարևոր հիմնասյուներից ու կողմնորոշիչներից մեկը: Այս մոտեցումը Իրանի, Թուրքիայի ու Ռուսաստանի միջև հարաբերությունների համատեքստում ամենից առանցքային համախոհության աղբյուր է. արտատարածաշրջանային ուժերի ներգրավվածության դեմ են իրենց քաղաքականությունը կառուցում նաև Թուրքիան ու Ռուսաստանը: Տարածաշրջանային փոխգործակցության՝ 3+3 ձևաչափը Թուրքիայի կողմից առաջարկվել է դեռևս 1990-ականներին՝ Հարավային Կովկասում խաղաղության ու կայունության պակտ անվամբ՝ նպատակ ունենալով ոչ միայն տարածաշրջանի երկրների միջև մեծացնել փոխգործակցության մակարդակը, այլև, և նախևառաջ, այդպիսով դուրս մղել արևմտյան երկրների՝ հնարավոր մասնակցությունը տարածաշրջանային քաղաքական ու տնտեսական պրոյեկտներին<sup>12</sup>:

### ***Վարձկանների խնդիրը իրանական քաղաքական խտությունում***

Արաբական երկրներում սկիզբ առած խտությունների ու հակամարտությունների առաջին իսկ օրերից Իրանի պաշտոնական արձագանքը շեշտում էր երկու կարևոր հանգամանք՝ խտությունն հրահրողները հովանավորվում են արտատարածաշրջանային ուժերի կողմից և որ դրանք

<sup>12</sup>Dr. Mamuka Tsereteli, *Black Sea Connectivity and the South Caucasus*, (Middle East Institute, March 2021), p.3

թաքվիրական խմբավորումներ են՝ իսլամին ու իսլամական օրենքին հակասող փիլիսոփայությամբ ու ռազմավարությամբ: Իրանի՝ տարածաշրջանային զարգացումներին արձագանքող քաղաքական խոսույթը վերլուծելիս անհրաժեշտ է հիշել, որ այդ քաղաքական մշակույթը հարուստ է քաղաքական մետաֆորներով<sup>13</sup> ու քաղաքական միջերի առատ օգտագործմամբ: Իսլամական փիլիսոփայությունը *Թաքվիրի* տերմինը բնորոշում է որպես «մուսուլման, որ անհավատի պես է պահում»<sup>14</sup>, իսկ իրանական քաղաքական իսլամի ընկալումը հղում է անում խոմեյնիական բնորոշմանը, ըստ որի՝ «թաքվիրի» են կոչվում այն խմբերը, որոնք «արևմուտքի հովանավորությամբ հակաիսլամական գործողություններ են կատարում ընդդեմ մուսուլմանների միասնության»<sup>15</sup>: Այաթոլլահ Խոմեյնին նույն թեմայի առնչությամբ նաև ֆեթվա է հրապարակել՝ զգուշացնելով մուսուլմաններին չտրվել Արևմուտքի, մասնավորապես Ամերիկայի ստեղծած մոլորություններին ու չնպաստել անջատողականությանը իսլամական աշխարհում<sup>16</sup>: Իրանի քաղաքական խոսույթի համաձայն՝ թաքվիրական խմբերն, իրենց գործունեությամբ վտանգում էին Իսլամի ու իսլամական հեղափոխության վարկը, ջլատում իսլամական աշխարհի միասնականության հնարավորությունները, Իսլամի համար նորանոր խոչընդոտներ ստեղծում:

<sup>13</sup> Farzad Sharifian, “Figurative language in international political discourse”, *Journal of Language and Politics*, 8(3) (2009), 416–432. doi:10.1075/jlp.8.3.04sha, p.419

<sup>14</sup> "Takfir". In Bosworth, C. E.; van Donzel, E. J.; Heinrichs, W. P.; Lewis, B.; Pellat, Ch.; Bearman, P. J. (eds.). *Encyclopedia of Islam, Second Edition*. Vol. 10. Leiden and Boston: Brill Publishers

<sup>15</sup> Split PDF (ri-khomeini.ac.ir)

<sup>16</sup> Imam Khomeini, *Sahifeh-ye Nur*, vol. 14, p. 157, Imam Khomeini | Prohibiting Takfir - Fatwas Of Shi'i Scholars | Al-Islam.org

Սիրիայում, Իրաքում, Եմենում, Լիբանանում Իրանի պետական ու պրոքսի ուժերի գոյությունը Իրանը բացատրում էր այս թաքվիրական խմբերի, որպես իսլամի դեմ ահաբեկչական կազմակերպությունների դեմ պայքարով: Իրանի՝ միջինարևլայան քաղաքականությունն, ըստ էության, վերջին տարիներին վերածվել էր ահաբեկիչների, իրանական խոսույթի համաձայն՝ թաքվիրական խմբերի դեմ պայքարի<sup>17</sup>: Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Ալի Խամենեիի խոսքերով՝ «թաքվիրական այդ խմբերը ստեղծվել ու օգտագործվում են սիոնիստական ռեժիմի կողմից մուսուլմանների դեմ պայքարի համար»<sup>18</sup>:

### **Վարձկանների խնդիրը 2020 թվականի պատերազմի համատեքստում**

Վարձկանների՝ Ղարաբաղում լինելու փաստն արձանագրող հայտարարություններ արել են Հայաստանի պետական գերատեսչությունները, իշխանությունները, խնդիրը մատնանշել ու դատապարտել են նաև Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իրանի իշխանությունները:

Հոկտեմբերի երեքի իր ելույթի մեջ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարեց՝ «Նախորդ օրվա մեր վերլուծությունները ցույց տվեցին, որ Արցախի պաշտպանության բանակի մեկ մարտական դիրքի վրա գրոհի է նետվում մոտավորապես 150-ից

<sup>17</sup> Edvard Wastnidge, “Iran’s Own ‘War on Terror’: Iranian Foreign Policy Towards Syria and Iraq During the Rouhani Era”. *Foreign Policy of Iran under President Hassan Rouhani’s First Term (2013–2017)*, (Contemporary Gulf Studies. Palgrave Macmillan, Singapore. [https://doi.org/10.1007/978-981-15-3924-4\\_6](https://doi.org/10.1007/978-981-15-3924-4_6)

<sup>18</sup> تعیین و اولویتبندی عوامل مؤثر در شکلگیری و فعالیت تروریسم تکفیری در جمهوری اسلامی ایران سید جواد امینی 2 ، محمدرض فصلنامه مطالعات دفاعی استراتژیک سال هجدهم، شماره 97 بهار 9977 مقاله دهم، از صفحه 8-858 ،

200 թշնամական զինվոր: Ընդ որում՝ այսպիսի գրոհները կրկնվում են օրվա մեջ մի քանի անգամ, ուղեկցվում են հրթիռային և ավանդական հրետանու, զրահատեխնիկայի, օդանավերի, անօդաչու թռչող սարքերի աջակցությամբ: Մեր զինվորականների վկայությամբ, բացի ադրբեջանական բանակի ստորաբաժանումներից, գրոհներին ներգրավված են սիրիացի վարձկաններ ու ահաբեկիչներ, թուրքական բանակի հատուկ ջոկատայիններ»<sup>19</sup>:

«Այժմ մենք ունենք տեղեկատվություն, որը ցույց է տալիս, որ ջիհադիստական խմբավորումների սիրիացի գրոհայիններն անցել են Գազիանթեփ [քաղաք Թուրքիայի հարավ-արևելքում, նախկին Այնթապ]՝ Լեռնային Ղարաբաղի պատերազմի թատերաբեմ հասնելու համար», - հայտարարել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը Բրյուսելում անցկացվող Եվրամիության գագաթնաժողովի շրջանակներում տված հարցազրույցի ընթացքում<sup>20</sup>:

«Մեզ, անխոս, մտահոգում է դարաբաղյան հակամարտության միջազգայնացումը և Մերձավոր Արևելքից գրոհայինների ներգրավումը» «Կոմերսանտին» նոյեմբերի 3-ին տված հարցազրույցի ժամանակ հայտարարել է ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը<sup>21</sup>:

<sup>19</sup> «Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը ժողովրդին», *Primeminister.am*, Վարչապետ Նիկոլ Փաշինյանի ուղերձը ժողովրդին - ՀՀ վարչապետի ելույթները և ուղերձները - Լրատվություն - Հայաստանի Հանրապետության վարչապետ ([primeminister.am](http://primeminister.am))

<sup>20</sup> «Macron reprimands Turkey, accuses Erdogan of sending 'jihadists' to Azerbaijan», *France 24*, 02.10.2020, Macron reprimands Turkey, accuses Erdogan of sending 'jihadists' to Azerbaijan ([france24.com](http://france24.com))

<sup>21</sup> «Россия с уважением воспримет любой выбор американского народа», *Коммерсантъ*, 03.11.20220, «Россия с уважением воспримет любой выбор американского народа» – Мир – Коммерсантъ ([kommersant.ru](http://kommersant.ru))

ՀՀ ԱԱԾ-ն իր՝ նոյեմբերի 6-ին հրապարակված հաղորդագրության մեջ նշում էր, որ անհերքելի ապացույցներ են ձեռք բերվել Լեռնային Ղարաբաղում «ան-Նուսրա», «Սուլթան Սուրադ», «Հայաթ Թահրիր աշ-Շամ» և այլ ահաբեկչական խմբավորումների անդամ վարձկանների առկայության մասին: Մի շարք վարձկանների հանդեպ հայտարարվել է հետախուզում: Պատերազմի ընթացքում հայկական կողմը ձերբակալել է Սիրիայի Արաբական Հանրապետության երկու քաղաքացիների, որոնց մեղադրանք է առաջարկվել ՀՀ քրեական օրենսգրքի մի քանի հոդվածներով: ՀՀ Վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի «Օրբելի» տեղեկատվական-վերլուծական կենտրոնն էլ փաստագրական ֆիլմ է պատրաստել Ղարաբաղյան պատերազմում սիրիացի վարձկանների ներկայության մասին՝ ներկայացնելով ինչպես փաստական տվյալներ, այնպես էլ վերլուծական կարծիքներ թեմայի վերաբերյալ<sup>22</sup>: Ղարաբաղյան երկրորդ պատերազմի վերաբերյալ քաղաքական արձագանքների մեջ մի շարք կազմակերպություններ ու պետություններ նույնպես շեշտադրում էին պատերազմում վարձկանների օգտագործման փաստը: Վարձկանների առկայության մասին գրում էին նաև հեղինակավոր պարբերականներ ու վերլուծական կենտրոններ: Ամերիկյան *Foreign affairs* պարբերականն, օրինակ, արդեն 2020 թվականի հոկտեմբերի հինգին վերլուծական հոդված հրապարակեց՝ «Սիրիացիները կազմում են Թուրքիայի՝ պրոքսի բանակը Լեռնային Ղարաբաղում» («Syrians Make Up Turkey's Proxy Army in Nagorno-

<sup>22</sup> «44-օրյա պատերազմ. Վարձկաններ», Օրբելի կենտրոն, 16.02.2022, Orbeli Analytical Research

Karabakh») խորագրով, որում փաստեր էր ներկայացնում Ղարաբաղյան երկրորդ պատերազմում սիրիացի վարձկանների ներկայության ու նրանց շրջանում տասնյակ զոհերի մասին<sup>23</sup>: Մինչ այդ ԱՄՆ պաշտպանության նախարարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին հղում անելով վարձկանների՝ Ղարաբաղում լինելու փաստը հաստատում են նաև արաբական պարբերականներ: *Sky News Arabian*, մասնավորապես, արդեն 2020 թվականի հոկտեմբերի մեկին ցիտում է վերոնշյալ պաշտոնյային՝ «Այն տվյալներն ու տեղեկությունները, որոնք խոսում են վերջին օրերին Թուրքիայից Ադրբեջան սիրիացի հարյուրավոր վարձկաններ տեղափոխելու համար կատարված տասնյակ ուղևորությունների մասին, հավաստի են»<sup>24</sup>: Վարձկանների՝ Ղարաբաղում լինելու փաստի մասին գրել է նաև Conflict intelligence team ռուսաստանյան անկախ հետաքննական կազմակերպությունն իր 2020 թվականի հոկտեմբերի 26-ի զեկույցում, որն ամբողջությամբ Ղարաբաղում հայտնված վարձկաններին, նրանց ծագմանն ու առաքելությանն է նվիրված<sup>25</sup>:

Նոյեմբերի 11-ին ՄԱԿ-ի վարձկանների հարցով աշխատանքային խումբը հայտարարություն տարածեց, որում նշվում էր, որ սիրիացիների հավաքագրման, տեղափոխման և օգտագործման մեխանիզմները համապատասխանում են միջազգային իրավական փաստաթղթերում հաստատված

<sup>23</sup> Liz Cookman, “Syrians Make Up Turkey’s Proxy Army in Nagorno-Karabakh”, *Foreign Policy*, October 5, 2020, *Syrians Are Fighting Turkey’s Battles in Nagorno-Karabakh* ([foreignpolicy.com](http://foreignpolicy.com))

<sup>24</sup>مسؤول أميركي يكشف حقيقة "رحلات المرتزقة" بين تركيا وأذربيجان, *SkyNews*, 01.10.2020, [skynewsarabia.com](http://skynewsarabia.com) أميركي يكشف حقيقة "رحلات المرتزقة" بين تركيا وأذربيجان | سكاى نيوز عربية

<sup>25</sup> “Syrian mercenaries in Karabakh: who they are, what they are doing there and where they are fighting”, *Conflict Intelligence Team*, 26.10.2020, *Syrian Mercenaries in Karabakh: who they are, what they are doing there and where they are fighting* — Conflict Intelligence Team ([citeam.org](http://citeam.org))



վարձկան ձևակերպմանը: Խուսմբը նաև իր մտահոգությունները փոխանցեց Թուրքիայի և Ադրբեջանի կառավարություններին<sup>26</sup>:

Ադրբեջանական կողմը մի շարք հայտարարություններով փորձել է հերքել վարձկանների գոյության փաստը: 2020 թվականի հոկտեմբերի 15-ին Ֆոանս 24-ին տված հարցազրույցում, օրինակ, Ադրբեջանի նախագահն ասել է, որ իրենք չունեն սիրիացի վարձկաններ ու երբևէ չեն ունեցել նրանց օգտագործելու կարիք<sup>27</sup>: Վարձկաններին Ղարաբաղում օգտագործելու փաստը հերքել է նաև Թուրքիան: 2020 թվականի հոկտեմբերի 14-ին պառլամենտում ելույթի ժամանակ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիպ Էրդոդանը, անդրադառնալով Ղարաբաղյան պատերազմին ու վարձկանների մասին քննադատություններին, նշում է՝ «Ոչ ոք չի խոսում Ռուսաստանի ու Ֆրանսիայի կողմից Հայաստան մատակարարված զինամթերքի մասին, բայց Ադրբեջանին մեղադրում են սիրիացի զինյալներին օգտագործելու մեջ: Սիրիացիները իրենց երկրում գործեր ունեն. նրանք այնտեղ չէին մեկնի»<sup>28</sup>: Այս հայտարարությամբ Էրդոդանը աչք էր փակում նաև այն հանգամանքի վրա, որ այդ մեղադրանքը ոչ միայն ու ոչ այնքան Ադրբեջանին էր ուղղված, որքան Թուրքիային:

*Իրանական* պաշտոնական շրջանակների կողմից առաջինը վարձկանների մասին հայտարարությամբ հանդես եկավ Իրանի

<sup>26</sup> «ՄԱԿ-ի վարձկանների հարցով խումբն արձանագրել է Արցախում նրանց օգտագործման փաստը՝ հիմնվելով նաև Մարդու իրավունքների պաշտպանի ապացույցների վրա», Ombuds.am, 17.11.2020, ՄԱԿ-ի վարձկանների հարցով խումբն արձանագրել է Արցախում նրանց օգտագործման փաստը՝ հիմնվելով նաև Մարդու իրավունքների պաշտպանի ապացույցների վրա, Ombudsman

<sup>27</sup> “We don't have Syrian mercenaries”: Ilham Aliyev speaks to France 24”, *France 24*, “We don't have Syrian mercenaries”: Ilham Aliyev speaks to France 24 - France 24

<sup>28</sup> “Президент Турции считает, что Минская группа ОБСЕ должна "вернуть территории Азербайджану”, *TACC*, 14.10.2020, Президент Турции считает, что Минская группа ОБСЕ должна "вернуть территории Азербайджану" - TACC (tass.ru)

արտաքին գործերի մամլո խոսնակ Խաթիրզադեն՝ ընդգծելով, որ «Իրանը թույլ չի տա վարձկանների գոյությունը տարածաշրջանում»<sup>29</sup>:

2020 թվականի հոկտեմբերի վեցին Իրանի հոգևոր առաջնորդի գրասենյակի հետ ասոցացվող պահպանողական *Keyhan* պարբերաթերթում հայտնվում է այաթոլլահ Ալի Խամենեյի խորհրդական Վելայաթիի ծավալուն հարցազրույցը տարածաշրջանում բռնկված պատերազմի մասին, որտեղ նախկին արտգործնախարարը հույս է հայտնում, որ թաքֆիրի ահաբեկիչների մասին փաստերը կհերքվեն, այլապես Իրանը թույլ չի տա Ամերիկայի ու Իսրայելի կողմից օգտագործվող ահաբեկիչների գոյությունն իր սահմանների հարևանությամբ»:<sup>30</sup>

Հոկտեմբերի 29-ին իրանական պետական լրատվական *IRNA* գործակալության կայքում հրապարակվեց հարցազրույց բեռլինաբնակ իրանցի հետազոտող Համիդեզա Ազիզիի հետ, որտեղ նա կարծիք էր հայտնում, որ «Ղարաբաղում ահաբեկչական խմբավորումների առկայությունը հակամարտությունն ընդլայնելու պատճառ են դառնալու»<sup>31</sup>: Նույն հարցազրույցում փորձագետ Ազիզին շեշտում է, որ սիրիացի զինյալների ներկայությունը Ղարաբաղում փաստող բազում տվյալների է հանդիպել և որ նրանց՝ Հարավային Կովկասում հայտնվելը Ռուսաստանի ու Իրանի՝ միջինարևելյան քաղաքականության մի առանցքային

<sup>29</sup> «خطیبزاده: ایران اجازه استقرار تروریست‌ها در مناطق همجوار مرزهای شمالی خود را نمی‌دهد», *KhabarOnline*, خطیبزاده: ایران اجازه استقرار تروریست‌ها در مناطق همجوار مرزهای شمالی خود را نمی‌دهد - خبر آنلاین (khabaronline.ir)

<sup>30</sup> «مناطق اشغالی آذربایجان باید تخلیه شود اما راحل آن نظامی نیست  
دکتر ولایتی در گفت‌وگو با کیهان: Keyhan»,

مناطق اشغالی آذربایجان باید تخلیه شود اما راحل آن نظامی نیست (kayhan.ir)

<sup>31</sup> «حضور گروه‌های تروریستی در قریباغ منجر به گسترش بحران می‌شود IRNA»,  
حضور گروه‌های تروریستی در قریباغ منجر به گسترش بحران می‌شود - ایرنا (irna.ir)

անվտանգության «բարձիկ», այն է՝ իրենց սահմաններից նրանց հեռու պահելը, վերացնում է: Փորձագետը նաև հարցադրում է անում, թե շիա բնակչությամբ Ադրբեջանում ինչպիսին են լինելու սուննիական այդ խմբերի հետագա գործողությունները<sup>32</sup>:

Թաքվիրական խմբերի գոյության՝ անընդունելի փաստը շեշտադրեց նաև Այաթոլլահ Խամենեին Ղարաբաղյան հակամարտությանն անդրադառնալիս: Նրա խոսքով՝ ահաբեկիչներին, որ հայտնվել են տարածաշրջանում, չպիտի թույլատրվի մոտենալ իրանական սահմաններին, բայց եթե այդպիսի փորձ անեն, հուժկու հակազդեցության կհանդիպեն»:<sup>33</sup> Հոգևոր առաջնորդի պաշտոնական կայքն այս ելույթի տեքստի հետ համատեղ իրանցի նախկին դիվանագետներից մեկի կարծիքն էր ավելացրել նաև այն մասին, որ «տարածաշրջանում շահագրգռված ուժ կա, որ այս թաքֆիրի ահաբեկիչները հայտնվեն Իրանի սահմանների մոտ»<sup>34</sup>:

Ադրբեջանում Իրանի նախկին դեսպաններից մեկն էլ ահաբեկիչների ներկայության մասին պարզաբանում էր տվել լրատվամիջոցներին ու ընդգծել, որ «ակնհայտ է այդ ուժերը Ադրբեջանին պաշտպանելու համար չէ, որ Ղարաբաղում են, այլ բոլորովին այլ նպատակով, մասնավորապես Իրանի սահմաններին մոտ գտնվելու համար են այստեղ»<sup>35</sup>:

<sup>32</sup> "حضور گروه‌های تروریستی در قرقمباغ منجر به گسترش بحران می‌شود IRNA",

حضور گروه‌های تروریستی در قرقمباغ منجر به گسترش بحران می‌شود - ایرنا(irma.ir)

<sup>33</sup> րամիլ քայան մնաքիշե քրմիաք, , *Khamenei.ir*, "րամիլ քայան մնաքիշե քրմիաք - քիքրան(khamenei.ir)

<sup>34</sup> րամիլ քայան մնաքիշե քրմիաք, , *Khamenei.ir*, "րամիլ քայան մնաքիշե քրմիաք - քիքրան(khamenei.ir)

<sup>35</sup> "ههدف اصلی از اعزام تکفیری ها به جنگ قره باغ",

ههدف-از-اعزام-تکفیری-ها-به-قره-باغ60017post/najva/https://masaf.ir, Masaf.ir

Իրանի նախկին արտգործնախարար Մոհամմադ Ջավադ Չարիֆն իր «աննախադեպ» որակված տարածաշրջանային տուռնեից հետո թվիթեյան իր հաշվետվության մեջ գրել էր, որ

«արդյունավետ քննարակումներ է ունեցել Երևանում՝ վերջին կոնֆլիկտից հետո եղած **ընդհանուր մարտահրավերներն** ու հնարավորությունները հաշվի առնելով, ու շեշտելով տարածաշրջանային համագործակցության ու հին թնշամիներին նոր գործընկերների վերածելու կարևորությունը», որտեղ «ընդհանուր մարտահրավերների» հիշատակումը սիրիացի զինյալների մասին ենթատեքստն էր պարունակում<sup>36</sup>:

Պատերազմից մեկ տարի անց Իրանն իր հյուսիսային սահմանների մոտ գորավարժություններ անելուն զուգահեռ արտգործնախարար Հուսեյն Ամիր Աբդոլլահիանի շուրթերով հայտարարեց, որ «Ադրբեջանի որոշ հատվածներում սիոնիստներ էին ներկա, երբ որոշ ահաբեկչական խմբեր ձախողված փորձ են կատարել մոտենալու Իրան-Ադրբեջան սահմանին: Նույն գորավարժությունների ժամանակ ԻՀՊԿ ցամաքային զորքերի զենեթալ Քիոմարս Հեյդարին հայտարարում է, որ Իրանն անհանգստություններ ունի տարածաշրջանում որոշ ահաբեկչական խմբերի գոյության պատճառով<sup>37</sup>: Հղում անելով Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ Թուրքիայի կողմից բերված սիրիացի զինյալներին, Հեյդարին շեշտում է, որ Իրանը վստահ չէ, որ այդ ուժերը լքել են տարածաշրջանը<sup>38</sup>:

<sup>36</sup> Joshua Kucera, “What Iran’s Zarif said in his ‘whistle stop tour’ of post-war Caucasus”, *Responsible Statecraft*, 29.01.2021, What Iran's Zarif said in his 'whistle stop tour' of post-war Caucasus - Responsible Statecraft

<sup>37</sup> Abbas Qaidari, “Iranian war games on the border with Azerbaijan were really a message to Israel”, *Atlantic Council*, Iranian war games on the border with Azerbaijan were really a message to Israel - Atlantic Council

<sup>38</sup> Ismi Aghayev, “Military exercises and a war of words between Iran and Azerbaijan”, *Open Caucasus Media*, 05.10.2021, “Military exercises and a war of words between Iran and Azerbaijan (oc-media.org)

Այսպիսով, դարաբաղյան երկրորդ պատերազմի վերաբերյալ արձագանքներով Իրանի քաղաքական բառարանը Հարավային Կովկասի ու միջինարևելյան իր խոսույթների մոտարկում է կատարում ու դիսկուրսիվ մակարդակում էլ ավելի սերտացնում կապերը տարածաշրջանների միջև: Այս գործընթացի առանցքային տարր են Ղարաբաղում օգտագործված սիրիացի վարձկանների վերաբերյալ իրանական արձագանքներն ու այդ արձագանքների քաղաքական բառապաշարը:

**MERCENARIES IN THE IRANIAN POLITICAL  
DISCOURSE: THE STRUGGLE AGAINST “TAQFIRI  
FORCES” AS A TOOL CONNECTING THE MIDDLE EAST  
AND THE SOUTH CAUCASUS**

*Anna Gevorgyan*

**Abstract**

The narratives of the struggle against the “takfiri forces” have a crucial place in the Iranian discourse on the Middle East. This struggle was a basis for the Islamic-political explanation of Iran’s engagement in the Middle East. During and after the 2020 war in Nagorno Karabakh, this religious-political structure entered also in the Iranian discourse on the South Caucasus: “taqfiri forces” was a definition Iran was using referring to the Syrian mercenaries used by Azerbaijan during the War. The article discusses the Iranian political responses to the involvement of the mercenaries in the Karabakh War and stresses the feature that the vocabulary of those responses can be explained as a tool for connecting the Middle East and the South Caucasus regions.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԷԼԻՏԱՅԻ  
ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ  
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՈՒ ԱՂԲԵՋԱՆԻ ՀԵՏ  
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 2008-2016 ԹԹ.**

Նարեկ Սուքիասյան<sup>1</sup>

DOI 10.56673/18294502-22.15-70  
Ներկայացվել է՝ 29 Սեպտեմբեր 2022  
Ընդունվել է՝ 30 Նոյեմբեր 2022

**Բանալի քառեր:** Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա, անվտանգային ընկալումներ, ՀՀ արտաքին քաղաքականություն, Ապրիլյան պատերազմ, Սերժ Սարգսյան, Էդվարդ Նալբանդյան

Հոդվածի նպատակն է պարզել ՀՀ կառավարող էլիտայի անվտանգային սպառնալիքների ընկալումների դինամիկան 2008 թ. ռուս-վրացական պատերազմից մինչև 2016 թ. Ապրիլյան քառօրյա պատերազմ: Որպես սպառնալիքներ առանձնացվել են ներքին-կառուցվածքային խնդիրները և Թուրքիայի ու Ադրբեջանի հետ հարաբերություններում առկա սպառնալիքները՝ ինչպես դրանք սահմանվել են հենց կառավարող էլիտայի կողմից: Հետազոտության համար կիրառվել է խոսույթային վերլուծության մեթոդը (discourse analysis), որի միջոցով հավաքագրվել և վերլուծության են ենթարկվել Սերժ Սարգսյանի և Էդվարդ Նալբանդյանի, ինչպես նաև, խիստ վերաբերելիության դեպքում, կառավարող էլիտան ներկայացնող առանցքային այլ դերակատարների ելույթները, տեքստերը, հարցազրույցները և հանրային խոսքի այլ վկայություններ: Հետազոտության նպատակը

<sup>1</sup> ԵՊՀ Զաղաքակրթական և մշակութային հետազոտությունների կենտրոն: Էլ. փոստ՝ n.sukiasyan@ysu.am

կարևոր է նրանով, որ սպառնալիքների գնահատումը՝ հիմնված էլիտայի ընկալումների վրա, արտաքին ու պաշտպանական քաղաքականությունների մշակման և/կամ դրանց գնահատման քաղաքականությունների ուղղորդման կարևորագույն հիմքն է:

«Հայաստանը նավակի պես կրկին հայտնվել է մեծ պեկոծությունների ուղիղ կենտրոնում: Պատերազմ հենց մեր հարևանությամբ, փակ սահմաններ, արտաքին հաղորդակցման խնդիրներ, բարդացող տարածաշրջանային հարաբերություններ, գերտեղությունների շահերի բախում. սա է այսօրվա իրականության շրջանակը Հայաստանի համար: Եվ այս պայմաններում է, որ մենք ոչ թե գոյատևման, այլ զարգացման խնդիրներ պիտի լուծենք:»

Սերժ Սարգսյան<sup>2</sup>

Նախագահության առաջին տարում ամերիկահայության հետ հանդիպման ժամանակ Սերժ Սարգսյանի արտահայտած այս միտքն ամփոփ ու թերևս լավագույնս է արտացոլում նրա դեկավարած կառավարող էլիտայի պատկերացումները Հայաստանի ներքին և արտաքին մարտահրավերների, միջավայրի և դրանց հաղթահարման ուղիների մասին:

Այս հոդվածի նպատակն է *վեր հանել* ՀՀ կառավարող էլիտայի անվտանգային սպառնալիքների ընկալումները Թուրքիայի և Ադրբեջանի հետ փոխհարաբերություններում 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո: Այդ նպատակով՝ ձևակերպվել են հետևյալ հարցադրումները. փոփոխվե՞լ են արդյուք և, եթե այո, ապա ինչպե՞ս են փոփոխվել այդ հարաբերությունները

<sup>2</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը», 9.24.2008 Accessed 7 10, 2021.  
<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24/news-18/>.

պայմանավորող հիմնական կոնստրուկտիվիստական նորմերը: Ինչպիսի՞ անվտանգային ինքնություն ունենալու համար Հայաստանի կառավարող էլիտան, ինչպիսի՞ն էին նրա արտաքին սպառնալիքների ընկալումները, որո՞նք էին, ըստ նրանց՝ այդ սպառնալիքների հաղթահարման միջոցները:

### **Ֆուտուրոլոգիայի ղիվանագիտություն. ձախողման հետևանքներ**

Սարգսյանի նախագահության հենց առաջին ամիսներին տեղի ունեցած ռուս-վրացական պատերազմը զգալի ազդեցություն է թողել նախագահի՝ միջավայրի կողմից պարտադրվող սահմանափակումների մասին պատկերացումների վրա, ինչպես նաև արտաքին քաղաքականության պատկերացումների հիմնադրույթների վրա թե՛ Արցախյան հակամարտության, թե՛ գերտերությունների մրցակցության, թե՛ տարածաշրջանային հաղորդակցությունների անվտանգության համատեքստերում<sup>3</sup>: Իշխանության գալուց հետո ներմուծելով արտաքին քաղաքականության մեջ շրջադարձային բեկում բերելու օրակարգ՝ ի նպաստ կառուցվածքային սահմանափակումների հաղթահարման<sup>4</sup>՝ Սարգսյանի առաջնահերթությունների թվում էր ապաշրջափակումը՝ առաջին հերթին առնվազն Թուրքիայի հետ սահմանի բացմամբ: Շրջափակման հանգամանքը՝ ի լրումն ծովային ելքի բացակայության, ըստ կառավարող էլիտայի, Հայաստանին դնում էր աշխարհում եզակիորեն վատ

<sup>3</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Մյունխենի անվտանգության քաղաքականության հարցերով համաժողովում» 2.7.2009 Accessed 5 19, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2009/02/07/news-30/>

<sup>4</sup> Aberg, John H.S., & Aram Terzyan. "Structure or agency? Explaining Armenia's foreign policy evolution." *Eastern Journal of European Studies*, 6: 2018, 151-172. [http://ejes.uaic.ro/articles/EJES2018\\_0901\\_ABE.pdf](http://ejes.uaic.ro/articles/EJES2018_0901_ABE.pdf)



իրավիճակում<sup>5</sup>, ինչն ընդգծվեց ռուս-վրացական պատերազմի ընթացքում հաղորդակցությունների խափանումից հետո: Խնդրի հանդեպ ի սկզբանե գերակայել է պրագմատիկ մոտեցումը, ըստ որի՝ Հայաստանի տնտեսությունը շահելու էր Թուրքայի հետ հարաբերությունների հաստատումից՝ անհիմն համարելով տնտեսական էքսպանսիայի մասին անհանգստությունները<sup>6</sup>: Կարգավորման գործընթացի տապալման հետ կապված հիասթափությունը, սակայն, վերջիվերջո մեղմում է գործադիրի ոգևորությունը՝ ընդունելով, որ, թեև ավելի ցածր տեմպով, բայց ՀՀ-ն կարող է զարգանալ նաև առանց դրա<sup>7</sup>:

Գլոբալ ֆինանսական ճգնաժամի սկզբնական փուլում միջազգային ֆինանսական համակարգերում Հայաստանի թույլ ինտեգրվածությունն էլիտան համարում էր գործոն, որը կարող էր մեղմել ճգնաժամի հետևանքները<sup>8</sup>, ու դրա հաղթահարումն ակնկալվում էր «առանց լուրջ ցնցումների»<sup>9</sup>: Սակայն ճգնաժամի

<sup>5</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սարգսյանի ելույթը բելգիահայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը.» 11.5.2008 Accessed 7 21, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/11/05/news-23>

<sup>6</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի մամուլի ասուլիսը պաշտոնավարման մեկ տարվա առիթով» 4.10.2009. Accessed 3 23, 2021, <https://www.president.am/hy/press-release/item/2009/04/10/news-462/%D6%89>.

<sup>7</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը «Մոսկովսկիե նովոստի» թերթին» 5.16.2011 Accessed 4 29, 2021. <https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2011/05/16/news-69/>

<sup>8</sup> ՀՀ Կառավարություն. «Հ. Ինչպե՞ս կարող են ազդել համաշխարհային ֆինանսական շուկաներում տեղի ունեցող իրադարձությունները «Բյուջե-2009»-ի վրա:». Առանց ամսաթիվ, Accessed 1.9.2022 <https://www.gov.am/en/faq/item/33/>:

<sup>9</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը»:

խորացումն ու Հայաստանի տնտեսության համար դրա հետևանքների սրացումը փոխեցին այդ ընկալումը<sup>10</sup>:

Միննույն ժամանակ կառավարող էլիտայի խոսույթում հստակ նկատելի է պետության անվտանգային ու զարգացման հարցերում ներքին կառուցվածքային թուլությունների և այն համալիր ջանքերի լարման գիտակցումը, որոնք անհրաժեշտ են այդ մարտահրավերների հաղթահարման համար: Նկատելի է նաև ներքին գործերում անվտանգայնացման միտում Սարգսյանի այն պնդման մեջ, որ «այն, ինչ ներելի էր [անվտանգության և պաշտպանության գործերում] և միգուցե օրինաչափ անկախության առաջին տարիներին, այժմ անհանդուրժելի է և պետք է բացառվի»<sup>11</sup>: Այդ նպատակով կարևորվում է պետական համակարգի արդյունավետության բարձրացումը, կառավարման տարբեր օղակների սիներգիան, դրանց համալիր ծառայեցումն անվտանգային խնդիրներին և առկա ռեսուրսների խելամիտ օգտագործումը<sup>12</sup>: Այլ կերպ ասած՝ գործադիր իշխանությունը խնդիր էր դնում «փոքր ուժերով մեծ խնդիրներ լուծել»<sup>13</sup>: Դրանով է թերևս պայմանավորված նաև այն, որ Մերժ Սարգսյանը պետության կարողությունների զարգացումը և դրանց հետ

<sup>10</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Սարգսյանի խոսքը ԱԳՆ կենտրոնական ապարատի եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների ղեկավարների հավաքին» 9.1.2009 Accessed 6 30, 2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2009/09/01/news-47/>:

<sup>11</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի խոսքը ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած ընդլայնված նիստում» 1.15.2013 Accessed 5 27, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministry-of-Defense/>.

<sup>12</sup> Նույն տեղում; Մերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահի ելույթը Հարվարդի Քենեդու ամվան կառավարման դպրոցում» 3.30.2016, Accessed 12.11.2022

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/03/30/President-Serzh-Sargsyan-speech-at-Harvard-university-speech/>:

<sup>13</sup> Նույն տեղում:

կապված մարտահրավերների հաղթահարումը տեսնում էր գլխավորապես Հայաստանի ներսում, այլ ոչ թե ապավինելով դաշնակիցներին և ընկերներին<sup>14</sup>:

Բացի վերոնշյալ՝ հիմնականում անուղղակի մարտահրավերներից, Սերժ Սարգսյանի գլխավորած կառավարող էլիտան առերեսվում էր ադրբեջանական աճող, ապա՝ նաև թուրքական սպառնալիքների հետ, որոնց թե՛ մակարդակը, թե՛ էլիտայի կողմից դրանց ընկալումը սրվեցին 2010-2011 թ.-ից սկսած: Ինչպես նշվեց, Սարգսյանը որդեգրել էր աշխարհաքաղաքական պայմանների բարելավման օրակարգ, որի համար խթան հանդիսացավ ռուս-վրացական պատերազմը<sup>15</sup> : Այդ պայմանների բարելավման ամենահավակնոտ և առաջին քայլերից էր Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման՝ դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու սահմանների բացմանն ուղղված գործընթացը: Այս հարցում գործադիր իշխանության տնտեսական պատկերացումներին արդեն անդրադարձ կատարվեց: Ինչ վերաբերում է խնդրի անվտանգային և ինքնութենական վերափոխման գործընթացներին, ապա, ինչպես և սպասելի էր, թուրքական հարցում արդեն ձևավորված նորմին հակառակ գործելը հանդիպեց լուրջ դիմադրության<sup>16</sup>՝ առաջ քաշելով ձևավորված նորմի վերանայման փուլ: Որպես այդ նորմերի վերափոխման փորձ՝ գործադիրի կողմից նախաձեռնվեց

<sup>14</sup> Նույն տեղում:

<sup>15</sup> Aberg & Terzyan, 2018, 165.

<sup>16</sup> Օրինակ, Հայ հեղափոխական դաշնակցությունը, լինելով կոալիցիոն իշխանության մաս, լքեց այն հենց այդ գործընթացի պատճառով՝ պնդելով, որ գործընթացով Հայաստանը փաստացի ընդունում է Թուրքիայի ավանդական երեք նախապայմանները (Cheterian 2018, 899):

հանրային ջատագովման արշավ ՀՀ-ում ու Սփյուռքում<sup>17</sup>: Այն ընդունելի դարձնելու համար կառավարող էլիտան հենվում էր պրագմատիկ փաստարկման վրա՝ համարելով, որ «Հայաստանի տնտեսության զարգացման համար օդի պես անհրաժեշտ է խաղաղ տարածաշրջան»<sup>18</sup>, և որ սահմանի բացմամբ հնարավորություն էր բացվելու բարձրացնելու Հայաստանի աշխարհաքաղաքական, հաղորդակցային նշանակությունը և ապահովելու անվտանգային անուղղակի երաշխիքներ<sup>19</sup>:

Ելնելով այն համոզմունքից, որ պրագմատիզմն ու պահի աշխարհաքաղաքական պայմանները թելադրում էին կողքի դնել (ոչ թե հրաժարվել) պատմական կնճիռները՝ Սերժ Սարգսյանը թերևս կարծում էր, որ, Թուրքիայի հետ ստորագրելով Ցյուրիխյան արձանագրությունները, «ինքնամփոփ անաղարտության մեջ պարփակվելու փոխարեն, դրանք [մեր համոզմունքներն ու ճշմարտության մեր հավատամքը] տեղ հասցնելու ճանապարհներ ենք բացում, աշխատանքի ճակատ ենք բացում»<sup>20</sup>: Նման մոտեցումը վկայում է կառավարող էլիտայի կողմից Թուրքիայի հետ ունեցած

<sup>17</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սարգսյանի ելույթը բեյզիսային համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը»; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ» 6/23.2008 Accessed 7 30, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/06/23/news-11/>:

<sup>18</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱԳՆ կենտրոնական ապարատի եւ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ու հյուպատոսական հիմնարկների ղեկավարների հավաքի ժամանակ» 9.3.2008, Accessed 7 10, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/03/news-4/>.

<sup>19</sup> Նույն տեղում; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սարգսյանի ելույթը բեյզիսային համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը»; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Ռուսաստանի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ»;

<sup>20</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սարգսյանի բացման խոսքը "Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման ներկա փուլը" թեմատիկ խորհրդակցության ժամանակ» 9.17.2009 Accessed 8.18.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2009/09/17/news-49/>:

խնդիրների հարցում ընդունված նորմերը վերանայելու, վերաիմաստավորելու փորձի մասին: Իսկ այն, որ այս քաղաքականությանն ընդդիմացողները փաստարկում էին իրենց քննադատությունն ազգային շահերից հրաժարման անթույլատրելիությամբ վկայում է հենց ընդունված նորմից շեղվելու պարագայում գործի դրվող պատժի գործառույթի ազդեցության մասին:

Բացի այդ, կարգավորման գործընթացի սկզբնական փուլում նախագահի խոսույթում առկա է վստահություն թուրք գործընկերների՝ գործընթացի հանդեպ անկեղծության մեջ և հիմնավոր լավատեսություն առ այն, որ երկու կողմերը պատրաստ են չթողնել խնդիրները գալիք սերունդներին<sup>21</sup>: Սակայն արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիայի՝ նախապայմաններին վերադառնալու և դրանց վավերացումն արհեստականորեն ձգձգելու քաղաքականությունն արդեն 2010 թ. ավարտում է էլիտայի լավատեսության փուլը, և ապրիլի 24-ի նախօրեին հայտարարվում է, որ «հարաբերությունների կարգավորման ներկա փուլը համարում ենք սպառված»<sup>22</sup>: Գործադիր իշխանության խոսույթում սկսում են նկատվել հետքայլեր կարգավորման գործընթացում մեղմացած

<sup>21</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՄԿԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը»:

<sup>22</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ» 4.22.2010, Accessed 3.19.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/04/22/news-60/>:

դիրքորոշումներից<sup>23</sup> և վերադարձ Թուրքիայի՝ որպես սպառնալիքի ընկալմանը, թերևս անգամ ավելի կոշտացած դիրքորոշումներով<sup>24</sup>: Թուրքիայի ժխտողականության քաղաքականությունը սկսում է շարադրվել որպես Հայաստանի գոյությանը սպառնացող անվտանգային խնդիր<sup>25</sup> (Ս. Սարգսյան 2013դ), բյուրեղանում է Ադրբեջանի և Թուրքիայի՝ որպես համատեղ սպառնալիքի ընթերցումը<sup>26</sup> : Եթե կարգավորման գործընթացի ակտիվ փուլում Թուրքիային վերապահվում էր Արցախի հիմնախնդրի լուծմանն օժանդակող գործոն<sup>27</sup>, ապա դրա տապալումից հետո անցում կատարվեց տրամագծորեն հակառակ դիրքորոշման<sup>28</sup>: Վերջապես, 2014 թ. հայ-թուրքական արձանագրություններն ուղարկվում են

<sup>23</sup> Սերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Վաշինգտոնի մայր տաճարում Վուդրո Վիլսոնի գերեզման այցելությունից հետո» 4.21.2010 Accessed 8 14, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/04/12/news-59/>.

<sup>24</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Կոնրադ Ադենաուերի հիմնադրամում» 3.7.2012 Accessed 7.19.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2012/03/07/news-124/>.

<sup>25</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՀՀ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած ընդլայնված նիստում», 1.15.2013 Accessed 5 27, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2013/01/15/President-Serzh-Sargsyan-speech-session-Ministry-of-Defense/>.

<sup>26</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում» 9.24.2014 Accessed 7.21.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-UN-New-York-speech/>; Սերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի հաշվետու զեկույցը ՀՀԿ 16-րդ համագումարում» 11.26.2016 Accessed 2.10.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/11/26/President-Serzh-Sargsyan-statement-at-RPA-16th-Convention-November-26/>:

<sup>27</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության, ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչության և ամերիկահայ առաջատար կազմակերպությունների կողմից կազմակերպած հանդիսավոր ընդունելությանը», 9.24.2008 Accessed 7.10.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2008/09/24/news-18/>:

<sup>28</sup> Սերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Վաշինգտոնի մայր տաճարում Վուդրո Վիլսոնի գերեզման այցելությունից հետո»

«գրողի ծոցը»<sup>29</sup>, թեև մինչ այդ դրանց վերադարձի պատուհանն ամեն կերպ բաց էր պահվում<sup>30</sup>:

Գործընթացի տապալումը թույլ չի տալիս գնահատել՝ կառավարող էլիտային հաջողվեց արդյոք հասնել արտաքին քաղաքական նորմատիվ վերափոխման, թե ոչ: Թեև տեղի ունեցավ իշխող կոալիցիայի բաժանում, բանավեճը չհանգեցրեց իշխանության կորստի, իսկ սփյուռքի հետ կապերը չկրեցին անվերականգնելի վնաս: Սրանք թույլ են տալիս ենթադրել, որ Թուրքիայի կողմից պարտավորությունների կատարման դեպքում հնարավոր է տեղի ունենար ներքին լարման աճ, սակայն դժվար թե նախկին ընդունված նորմին հաջողվեր «պատժել» կամ «զրկել դերակատարի կարգավիճակից»՝ դելեգիտիմացնել կառավարող էլիտային, ինչը տեսականորեն նորմերի հիմնական գործառույթն է՝ սահմանել ընդունելի պրակտիկաներ և պատժել դրանցից շեղվելու դեպքում:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այս հարցում Սերժ Սարգսյանը սկսել էր գործել մի իրավիճակում, որտեղ Ադրբեջանի գործողություններն ու հռետորաբանությունը մեծացրել էին սպառնալիքի մակարդակը, որն էլ իր ազդեցությունն է թողել Սերժ Սարգսյանի խոսույթի վրա կառավարման հենց մեկնարկից<sup>31</sup>:

<sup>29</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում» 9.24.2014, Accessed 7.21.2021: <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/09/24/President-Serzh-Sargsyan-UN-New-York-speech/>:

<sup>30</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի հեռուստաուղերձը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացի վերաբերյալ»:

<sup>31</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում», 2.10.2010 Accessed 3.19.2021. [https://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/02/10/news-57](https://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/02/10/news-57;); 2011թ. Սերժ Սարգսյան, «ՀՀ ԱԳՆ կենտրոնական ապարատի և ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների խորհրդակցությանը Սերժ Սարգսյանի

Այնուամենայնիվ, ռուս-վրացական պատերազմից հետո Դմիտրի Մեդվեդևի միջնորդությամբ բանակցային ջանքերի ակտիվացումը հանգեցրեց Սարգսյանի որոշակի զգուշավոր լավատեսությանը<sup>32</sup>, որը, սակայն, կազանյան բանակցություններից հետո անհետացավ՝ էլ ավելի սաստկացնելով ադրբեջանական աճող սպառնալիքի ընկալումը: Միևնույն ժամանակ, իշխանության խոսույթում դժվար է գտնել արցախյան հիմնախնդրի բանակցային կարգավորմանն առնչվող մաքսիմալիստական նկրտումներ, և բարձր մակարդակում շարունակաբար ու կայուն կերպով հնչեցվում է փոխզիջումային լուծման անհրաժեշտությունն ու պատրաստակամությունը<sup>33</sup>, մինչդեռ ադրբեջանական դիրքորոշումը բնութագրվում է որպես «ամեն ինչ կամ ոչինչ»<sup>34</sup>, «ամեն ինչ միայն ինձ»<sup>35</sup>: Մադրիդյան սկզբունքների համաձայն փոխզիջումների (այդ թվում՝ տարածքային) գնալու պատրաստականության մասին միայն նշենք, որ Սարգսյանի կողմից այն վերահաստատվել է հանրային հարցազրույցներում<sup>36</sup>, որոնցից մեկում նա

---

խոսքից», 8.30.2011, Accessed 2 18, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/08/30/news-97/>:

<sup>32</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սարգսյանի ելույթը Բելգիահայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպմանը»:

<sup>33</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը զորավարություններից հետո» 11.13.2010, Accessed 7.10.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2010/11/13/news-74/>:

<sup>34</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանում», 9.23.2011, Accessed 4 13, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2011/09/23/news-107/>

<sup>35</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Պաշտպանության նախարարությունում», 1.26.2015, Accessed 7 25, 2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2015/01/26/President-Serzh-Sargsyan-speech-in-the-Ministry-of-Defence/>.

<sup>36</sup> Серж Саргсян, հարցազրույց, «Гость Серж Саргсян. Познер. Выпуск от 27.04.2015» (8.3). Владимир Познер. 2016. Accessed 10 26, 2021.

[https://www.youtube.com/watch?v=KmYJQHwu\\_ns](https://www.youtube.com/watch?v=KmYJQHwu_ns).



վերահաստատել է նաև 2001 թ. Ազգային ժողովի ամբիոնից Արցախի անվտանգության գոտիների մասին իր դիրքորոշումը<sup>37</sup>:

Հայաստանի ղեկավարությունը բարձր զգայունություն է ցուցաբերել նաև Ադրբեջանի կողմից սպառազինման տեմպի աճի նկատմամբ և ընթերցել Ադրբեջանի գործողությունները որպես պատերազմական իրական նախապատրաստություն<sup>38</sup>: Ըստ կառավարող էլիտայի՝ Ադրբեջանում «պատրաստ կլինեն վերսկսել պատերազմը, եթե համարեն, որ ունեն բացարձակ առավելություն Հայաստանի նկատմամբ կամ եթե դա անհրաժեշտ լինի ներքին խնդիրներից ուշադրություն շեղելու համար»<sup>39</sup>: Իրական ռազմական սպառնալիքի աճը կամ մոտավորապես պատերազմի ընկալումն էլիտայի մոտ հատկապես սրվում է 2014 թ. օգոստոսյան լարվածությունից հետո և մինչ Ապրիլյան պատերազմը<sup>40</sup>: Նման

<sup>37</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի մամուլի ասուլիսը պաշտոնավարման 100 օրվա կապակցությամբ», 7.21.2008 Accessed 3.26.2021.

<https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2008/07/21/news-9/>:

<sup>38</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում»; Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի ելույթը գորավարժություններից հետո»; Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 66-րդ նստաշրջանում»; Մերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի խոսքը Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպման ժամանակ», 8.31.2012, Accessed 6.26.2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2012/08/31/President-Serzh-Sargsyan-speech-ambassadors/>:

<sup>39</sup> Նույն տեղում; Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի խոսքը ԵԱՀԿ-ում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպման ժամանակ», 9.7.2012, Accessed 4 25, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2012/09/07/President-Serzh-Sargsyan-speech-meeting-OSCE-ambassadors/>:

<sup>40</sup> Մերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ, ՀՀԿ նախագահ Մերժ Սարգսյանի ելույթը ՀՀԿ խորհրդի նիստում», 9.16.2014, Accessed 3 19, 2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2014/09/06/President-Serzh-Sargsyan-at-RPA-Council-Session/>; Մերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ Մերժ Սարգսյանի ելույթը Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի շրջանավարտների երրորդ միջազգային համաժողովի ժամանակ», 10.23.2015 Accessed 7.18.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2015/10/23/President-Serzh-Sargsyan-speech-at-Moscow-Internation->

կերպ ընկալվող սպառնալիքի աճին կառավարող էլիտան արձագանքում է անվտանգային ու արտաքին քաղաքականության մի քանի հակակշիռ գործիքներով՝ սպառազինության որակական մրցավազք, միջազգային հանրության միջոցով ճնշումներ և Ռուսաստանի հետ դաշնակցային քաղաքականության խորացում (որին անդրադառնում ենք ստորև): Ինչ վերաբերում է սեփական կարողություններին, ապա գործադիր իշխանությունը համարում էր, որ «այսօր մենք ունենք հավանական հակառակորդին զսպելու բավարար ուժ և միջոցներ»<sup>41</sup>, և պարտադրված պատերազմի դեպքում «ադրբեջանցիները բողոքելու են ոչ թե 20 տոկոսի մասին, այլ 25, 30 տոկոսի մասին»<sup>42</sup>: Էլիտայի խոսույթում առկա է հստակ գիտակցում ուժերի բալանսի և Ադրբեջանի համախառն կարողությունների քանակական անհամաչափության մասին, սակայն կա վստահություն, որը կարծես ավելի է ամրապնդվել 2014 թ. օգոստոսյան մարտերից հետո, ըստ որի, հայկական կողմն ունի որակական առավելություն և որ կործանիչ սպառազինությունների առումով Հայաստանն արդյունավետորեն զսպում է Ադրբեջանին<sup>43</sup> (Ս. Սարգսյան 2014դ): Բացարձակ կարողություններից բացի, սահմանին և շփման գծում լարվածության աճի զսպման համար,

---

Relations-Institute-Forum/; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Պաշտպանության նախարարությունում»:

<sup>41</sup> Սերժ Սարգսյան, «<<Նախագահ, <<Կ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը <<Կ 13-րդ համագումարում» 3.10.2012, Accessed 9.11.2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2012/03/10/news-123/>:

<sup>42</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանը ԵԻՄԿՎ լիազումար նիստում պատասխանել է վեհաժողովի անդամների հարցերին», 10.2.2013, Accessed 6 10, 2021. <https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2013/10/02/President-Serzh-Sargsyan-answered-the-questions-of-PACE-members>:

<sup>43</sup> Սերժ Սարգսյան, հարցազրույց, Արտակ Ալեքսանյան. «Նախագահ Սերժ Սարգսյանի հարցազրույցը «Արմնյուզ» հեռուստաընկերությանը» (8.11.2014), Accessed 2 6, 2021. <https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2014/08/11/President-Serzh-Sargsyan-interview-Armnews-Sochi/>

ՊՆ նախարարի տեղակալի բնորոշմամբ, անցում է կատարվում «ստատիկ պաշտպանությունից» «սանձահարման/զսպման համակարգի»<sup>44</sup>:

Կառավարող Էլիտայի խոսույթը ցույց է տալիս, որ ադրբեջանական սպառնալիքի զսպման հարցում նպատակ էր հետապնդվում պարզ դարձնել, որ բանակցային փակուղու պատճառն Ադրբեջանն է՝ մատնանշելով Ադրբեջանի ապակառուցողական վարքագիծը սահմանային ու շփման գծում, ռազմական հռետորաբանությունը, միջազգային պարտավորությունների խախտմամբ սպառազինումը<sup>45</sup>: ՀՀ արտաքին քաղաքականության պատասխանատուները միևնույն ժամանակ չէին վարանում քննադատության արժանացնել միջազգային հանրությանը նման դեպքերում հասցեական արձագանքի բացակայության համար, որն, ըստ իրենց, հանգեցնում էր անպատժելիության և Ադրբեջանի սանձարձակության<sup>46</sup>:

<sup>44</sup> Mediamax.am, «ՀՀ ՉՈՒ-ն անցնում է «Սանձահարման/Չսպման համակարգի»  
2.18.2016, Accessed 2.18.2020. <https://mediamax.am/am/news/armypolice/16996>.

<sup>45</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը Բրիտանիայի միջազգային հարաբերությունների թագավորական ինստիտուտում»; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ԵԱՀԿ-ում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպման ժամանակ»; Էդվարդ Նալբանդյան, «Հայաստանի արտաքին գործերի նախարար Ն.Գ. պրն. Էդվարդ Նալբանդյանի ելույթը ԵԱՀԿ Նախարարների խորհրդի 17-րդ հանդիպմանը», 12.2.2009, Accessed 8.21.2021.  
<https://www.mfa.am/hy/speeches/2009/12/02/nalbandian-athens/1763>:

<sup>46</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ԵԱՀԿ-ում հավատարմագրված դեսպանների հետ հանդիպման ժամանակ»; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 69-րդ նստաշրջանում»; Սերժ Սարգսյան, «ԵԱՀԿ անդամ երկրների դեսպանների հետ հանդիպման բացման խոսք», 4.4.2016, Accessed 6.3.2021.  
<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/04/04/Presdident-ASerzh-Sargsyan-meeting-with-Ambassadors-of-OSCE-states-speech/>:

## Ապրիլյան պատերազմը և հետևանքները

Սակայն Ապրիլյան պատերազմը զգալի, եթե ոչ բեկումնային նշանակություն ունեցավ կառավարող էլիտայի ներքին կառուցվածքային օրակարգում՝ առաջ քաշելով պետության համընդհանուր ջանքերի մոբիլիզացիային ուղղված «ազգ-բանակ» հայեցակարգի ներմուծումը: Ի թիվս այլ ներքաղաքական պատճառների՝ Կարեն Կարապետյանի նշանակումը վարչապետի պաշտոնում հետապնդում էր պետության համապատասխան տնտեսական կարողությունների ապահովման նպատակ<sup>47</sup>, քանի որ «պարզապես մեկ-երկու կետով առավելություն ունենալով մեր մրցակիցների հանդեպ, չենք կարողանա արդյունավետորեն զարգանալ»<sup>48</sup>: Կարծրանում էր նաև այն պատկերացումը, որ Հայաստանը հաղթահարել է արտաքին տնտեսական բացասական պայմանները<sup>49</sup>՝ պարտադրված Թուրքիայի ու Ադրբեջանի շրջափակման հետևանքով («Ադրբեջանի ինքնահանգստացումներն այն առումով, որ Հայաստանը մեկուսացված է, մի՛ֆ է, մի՛ֆ, չկա այդպիսի բան»<sup>50</sup>):

<sup>47</sup> Սերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը ՀՀԿ խորհրդի նիստում» 9.8.2016, Accessed 7.21.2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/09/08/President-Serzh-Sargsyan-speech-Republican-Party/>:

<sup>48</sup> Սերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ, ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի հաշվետու զեկույցը ՀՀԿ 16-րդ համագումարում», 11.26.2016, Accessed 2.10.2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/11/26/President-Serzh-Sargsyan-statement-at-RPA-16th-Convention-November-26/>:

<sup>49</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտում» 3.14.2017, Accessed 7.25.2021.

<https://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/03/14/President-Serzh-Sargsyan-statement-at-MGIMO>:

<sup>50</sup> Սերժ Սարգսյան, «Նախագահը Մյունխենի անվտանգության համաժողովում պատասխանել է քննարկման մասնակիցներին հետաքրքրող հարցերին», 2.17.2018, Accessed 8.10.2021. <https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2018/02/17/President-Serzh-Sargsyan-answered-questions-of-participants-of-Munich-Security-Conference/>:

Ապրիլյան պատերազմը բնականաբար ազդեց նաև էլիտայի կողմից ադրբեջանական սպառնալիքի ընկալման վրա: Խիստ նկատելի է Սարգսյանի խոսույթում ուժային հավասարակշռության պահպանման հանդեպ զգայունության աճը<sup>51</sup>, կործանիչ հեռահար նոր զինատեսակների միջոցով լայնածավալ պատերազմի վերսկսումը զսպող գործոնի ընկալումը<sup>52</sup>: Կառավարող էլիտայի խոսույթը նաև ցույց է տալիս որոշակի վստահությունն ու լավատեսությունն պատերազմի արդյունքում ԵԱՀԿ Մինսկի խմբի ու Հայաստանի դիրքորոշումների ներդաշնակեցմանն ու Ադրբեջանի բանակցային վատ դիրքերի մասին<sup>53</sup>: Այնուամենայնիվ, Բաքվի ռազմատենչ հռետորաբանությանն ի արձագանք՝ պահպանվում, եթե ոչ սրվում է հակամարտության ուժային բաղադրիչը՝ արտահայտված վերոնշյալ սպառազինությունների հավասարակշռման անհրաժեշտության խոսույթի մեջ: Դատելով այդ խոսույթից՝ կարելի է ենթադրել, որ Ապրիլյան պատերազմի սահմանափակ հաջողությունները, ռազմական տեխնիկայի ու զինուժի արդյունավետությունը որոշակի ինքնավստահություն էր հաղորդել էլիտային սեփական պաշտպանողական կարողությունների տակտիկական ոչ թե քանակական, այլ որակական բաղադրիչի հանդեպ<sup>54</sup>: Պատերազմի կարևոր

<sup>51</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի դասախոսությունը Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում», 10.24.2017, Accessed 8.21.2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2017/10/24/president-serzh-sargsyans-lecture-at-NDRU>:

<sup>52</sup> Մերժ Սարգսյան, «ՀՀ Նախագահ, ՀՀԿ նախագահ Մերժ Սարգսյանի հաշվետու զեկույցը ՀՀԿ 16-րդ համագումարում»:

<sup>53</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի ելույթը ԱՊՀ մասնակից պետությունների ղեկավարների խորհրդի նեղ կազմով նիստի ժամանակ», 9.16.2016, Accessed 7 18, 2021. <https://www.president.am/hy/statements-and-messages/item/2016/09/16/President-Serzh-Sargsyan-speech-Kyrgyzstan/>:

<sup>54</sup> Մերժ Սարգսյան, «Նախագահ Մերժ Սարգսյանի և ԳԴՀ կանցլեր Անգելա Մերկելի համատեղ մամուլի ասուլիսը», 4.6.2016, Accessed 8.21.2021.

արձանագրումներից էր նաև այն, որ դրա ընթացքում թե՛ հասարակության, թե՛ կառավարող և ոչ կառավարող քաղաքական էլիտայի շրջանում կարծրացավ հակամարտության հարցում դիրքորոշումը<sup>55</sup> և նորմատիվ առումով պակասեց փոխզիջումների հանդեպ հանրային-քաղաքական հանդուրժողականությունը<sup>56</sup>:

Հոդվածում ներկայացվեցին 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո կառավարող էլիտայի արտաքին քաղաքական ընկալումների էվոլյուցիայի և վերափոխումների գործընթացը, ինչն էլ ձևավորել էվերջինիս քաղաքականությունը հայ-ռուսական հարաբերություններում: Ամփոփելով գործոնների ազդեցությունը՝ կարող ենք արձանագրել, որ պատերազմը նշանակալի ազդեցություն է ունեցել կառավարող էլիտայի արտաքին քաղաքական պատկերացումների ձևավորման վրա, ինչպես նաև արդիականացրել ներքին կառուցվածքային խոցելիության խնդիրների գիտակցումը, որոնք էլ հաճախ խթանել են արտաքին քաղաքական նախապատ-վությունները՝ մասնավորապես խթանելով Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացը: Սահմանափակ ռեսուրսների գիտակցումը պայմանավորել է դրանց արդյունավետ օգտագործման

<https://www.president.am/hy/interviews-and-press-conferences/item/2016/04/06/President-Serzh-Sargsyan-meeting-with-German-Chancellor-Angela-Merkel-speech/>; Սերժ Սարգսյան, «Նախագահ Սերժ Սարգսյանի դասախոսությունը Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանում»:

<sup>55</sup> Այս համատեքստում է հարկավոր դիտարկել նաև 2016 թ. Պետական պաշտպանության ծառայության գնդի պատնդառման դեպքերն ու դրանց քաղաքական ենթատեքստը, ինչը բարձրացրեց զիջողական քայլերի հանդեպ հասարակական-քաղաքական անհանդուրժողականության շեմը:

<sup>56</sup> Mikayel Zolyan, “Rise of Militaristic Sentiment and Patriotic Discourses in Armenia: An Analytic Review”. Yerevan: *Caucasus Edition*. (2016) <https://caucasusedition.net/wp-content/uploads/2018/01/Analytic-Review-Armenia.pdf>:

անհրաժեշտությունը, իսկ դրանց վատնումն անվտանգայնացվել՝ առնվազն խոսույթային մակարդակում:

Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը, կրճատելով արտաքին սպառնալիքներն ու բազմազանեցնելով քաղաքատնտեսական հնարավորությունները, նպաստելու էր ՌԴ-ից ենթադաշնակցման (bandwagoning) անհամաչափության կրճատմանը, որի արտահայտումը կառավարող Էլիտայի խոսույթում խիստ անուղղակի է: Այսպիսով, Էլիտան փորձ էր կատարում վերափոխել 1998 թ. կարծես անսասան հաստատված նորմը, ու թեև կան հիմքեր ենթադրելու, որ այն ուներ հաջողության զգալի հնարավորություն, սակայն Թուրքիայի կողմից գործընթացի տապալումը թույլ չի տալիս լիարժեք գնահատել նորմի վերանայման փորձի հաջողությունը: Սակայն կարելի է պնդել, որ այս հարցի շուրջ մոտեցումները տարբերվում են նախորդ Էլիտայի պատկերացումներից: Գործադիրի խոսույթում հարևանների հետ հարաբերությունների կարգավորման նկատմամբ լավատեսությունը 2010-2011թթ. գերազանցապես փոխարինվում է հակառակ տրամադրվածությամբ՝ պայմանավորված արձանագրությունների վավերացման ձգձգմամբ, կազանյան բանակցությունների ձախողմամբ ու «ցածր ինտենսիվության պատերազմին» անցումով: Այս հարցում Ադրբեյջանի ուժգնացող ռազմական դիվանագիտության արդյունքում Սարգսյանի գլխավորած Էլիտայի մոտ ավելի էր սրվել ռազմական սպառնալիքի ընկալումն ու պատերազմի ակնկալիքը:

Ապրիլյան պատերազմի հետևանքով Սերժ Սարգսյանի գլխավորած կառավարող Էլիտայի ընկալումներն ու նորմերը Հայաստանի ու Արցախի անվտանգության մասին ապրեցին որոշակի փոփոխություններ: Դրանք արտահայտվում էին ուժերի

հավասարակշռության հանդեպ ավելի զգայուն մոտեցմամբ, անվտանգային սպառնալիքներին համարժեք տնտեսական ու համալիր կարողություններ ստեղծելու անհրաժեշտության գիտակցմամբ, բայց նաև անհամաչափ, սակայն սահմանափակ, տակտիկական ռազմական գործողություններում՝ ինչպիսին էր Ապրիլյան պատերազմը, սեփական ուժերի հանդեպ ինքնավստահության աճով:

**THREAT PERCEPTION OF THE RULING ELITE OF THE  
REPUBLIC OF ARMENIA IN RELATIONS WITH TURKEY AND  
AZERBAIJAN 2008-2016**

*Narek Sukiasyan*

**Abstract**

The purpose of the article is to find out the dynamics of security threat perceptions among the ruling elite of Armenia from the 2008 Russian-Georgian war to the 2016 April four-day war. The internal structural problems and the existing threats in the relations with Turkey and Azerbaijan were singled out, as defined by the ruling elite. Through discourse analysis the speeches, texts, interviews and other formats of public speech by president Serzh Sargsyan and Minister of Foreign Affairs Edward Nalbandian, as well as, in case of strong relevance, other key actors representing the ruling elite were collected and analyzed. The importance of the research purpose is that the perceptions of threat, as assessed by the elites, is the most important foundation for formulating foreign and defense policies and/or informing their assessment.



## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

*Արսյոմ Տոնոյան (խմբ.). Սև Այգին կրակի մեջ. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խորհրդային և ռուսական մամուլում (Black Garden Aflame: The Nagorno-Karabakh Conflict in the Soviet and Russian Press). East View Press, United States, 2021, 483 էջ, \$75 (փափուկ կազմ), ISBN 978-1-87994-455-8*

DOI 10.56673/18294502-22.15-89

Ներկայացվել է՝ 15 Հոկտեմբեր 2022

Ընդունվել է՝ 19 Նոյեմբեր 2022

Բազմաթիվ գրքեր և հոդվածներ են գրվել Լեռնային Ղարաբաղի հակամարտության մասին՝ ընդգրկելով դրա տարբեր ասպեկտներ՝ կրոնական խնդիրներից մինչև տեղանուններ: Սակայն կան միայն մի քանի հիմնական հավաքածուներ, որոնք թարգմանված են անգլերեն, և ռուսերենին չտիրապետող, սակայն Արցախյան հիմնահարցով հետաքրքրվող հետազոտողներին ու ուսանողներին հնարավորություն են տալիս ծանոթանալ հիմնահարցի վերաբերյալ առկա սկզբնաղբյուրներին, որոնց մեջ կարևոր է հատկապես խորհրդային ու ռուսական մամուլում տեղ գտած հոդվածները: Դոկտոր Արսյոմ Տոնոյանի «Սև Այգին կրակի մեջ. Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խորհրդային և ռուսական մամուլում» (*Black Garden Aflame: The Nagorno-Karabakh Conflict in the Soviet and Russian Press*) աշխատանքը այդ քիչ աշխատանքներից է:

Տոնոյանի խմբագրած հատորը խորհրդային և ռուսական մամուլի հոդվածների ժողովածու է, որը ուսանողներին և գիտնականներին տրամադրում է ուշ խորհրդային և ռուսական

մամուլում տեղ գտած և Արցախյան հիմնահարցին առնչվող հոդվածների մի ողջ խումբ: Տոնոյանը նպատակադրվել է ոչ թե վերլուծել այս հոդվածները, այլ լեզվին չտիրապետող և/կամ պարբերականներին հասանելիություն չունեցող գիտնականներին և ուսանողներին մուտք տալ աղբյուրների այս հսկայական շտեմարանին: Իր անգլալեզու ընթերցողների համար Տոնոյանը Լեոնային Ղարաբաղի հակամարտության համատեքստը դիտարկում է Մոսկվայի ոսպնյակով, ինչպես նաև ներկայացնում է դրա խճճված պատմական, քաղաքական և էթնիկ հիմքերի շուրջ ռուսական կողմի դիրքորոշումները: Ինչպես գրում է Տոնոյանը, «գրքի նպատակն է ապահովել հակամարտության ռուսական ըմբռնման և՛ ամենալայն, և՛ խորը համատեքստը, քանի որ այն մասնատվել, վիճաբանվել և կրկին քննարկվել է խորհրդային և ռուսական մամուլի էջերում» (էջ xxiii):

Գիրքը սկսվում է հեղինակի ներածականով, որտեղ Տոնոյանը կապում է գրքում ներկայացված նյութը Արցախյան հակամարտության ներկայիս փուլի հետ: Տոնոյանն իր այս ներդրումն անում է 2020 թվականի աշնանը Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծած պատերազմից մեկ տարի անց: Ինչպես նա նշում է, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը լուռ էր մոտ տաս օր, որից հետո նրա արտահայտած դիրքորոշման հիմնական միտքն այն էր, որ Ռուսաստանը չի պատրաստվում ռազմական աջակցություն ցուցաբերել տարածաշրջանում իր դաշնակցին՝ Հայաստանին: Տոնոյանը ցույց է տալիս, թե որքան առանցքային են այս գրքում տեղ գտած հոդվածները հակամարտության միջազգային կողմերից մեկի՝ Ռուսաստանի դիրքորոշումը հասկանալու տեսակետից: Խորհրդային և ռուսական մամուլում տեղ գտած հոդվածներն օգտագործելով՝ նա իր այս ներածական վերլուծությունը համատեքստավորում է ԽՍՀՄ և ՌԴ պատմաաղաքական միջավայրում:

Իր քառամաս աշխատանքը Տոնոյանը բաժանել է 14 գլուխների/գլխի: Հակամարտության ծագմանը վերաբերող հոդվածները, որոնք տեղ էին գտել խորհրդային մամուլում, պարփակված են գրքի **առաջին հատվածում**: Այս հոդվածները ցույց են տալիս Հայաստանում, Արցախում և Ադրբեջանում սկիզբ առած ցույցերի, ինչպես նաև հայերի դեմ կազմակերպված ջարդերի վերաբերյալ ռուսական ընկալումները: Այս մասում մի ամբողջ գլուխ էլ ներկայացնում է ճգնաժամի չեզոքացմանն ուղղված խորհրդային ջանքերի լուսաբանումը:

**Երկրորդ հատվածը** առնչվում է հակամարտության միջազգայնացմանը և ներառում է այն հոդվածները, որոնք ուղղակիորեն առնչվում են Մոսկվայի դերին: Մրա վառ օրինակներից են «Մոսկվան Բաքվի և Երևանի միջև» ("Moscow between Baku and Yerevan" (*Moskovskiy Novosti*, April 12, 1992)) (էջ՝ 203-204) և «Ռուսական դիվանագիտության դեբյուտը Ղարաբաղում. ԱԳ նախարարը չկարողացավ էական արդյունքների հասնել, բայց կային «հույսի շողեր»» ("Russian Diplomacy's Debut in Karabakh- The Foreign Minister Failed to Achieve Significant Results, but there Were 'Some Rays of Hope'" (*Izvestia*, April 13, 1992)) (էջ՝ 204-207) հոդվածները: Ընթերցողն այս հոդվածների միջոցով կարող է նաև վերակառուցել այն պատկերը, որ Ռուսաստանն ուներ հակամարտության մեջ իր դերի վերաբերյալ: Տոնոյանը *Սեզոննյա, Նեզավիսիմայա Գազետա, Կոմերսանտ-Ղեյլի, Մոսկովսկիե Նովոստի* և այլ պարբերականներում տեղ գտած հոդվածների միջոցով ցույց է տալիս, թե ինչպես էր Մոսկվան տեսնում Լեռնային Ղարաբաղի շուրջ տարվող բանակցությունները և ինչպես էր կազմակերպում իր քայլերը: Ըստ էության, Տոնոյանի գրքի այս հատվածը հատկապես կարևոր ընթերցանություն է Ռուսաստանի արտաքին քաղաքականությամբ հետաքրքրվող հետազոտողների համար:

Գրքի **երրորդ հատվածը** արդեն իսկ միջազգայնացված խնդիրը դիտարկում է տարբեր միջազգային սուբյեկտների կամ դերակատարների դերի վերաբերյալ՝ ռուսական մամուլի ունեցած դիրքորոշման համատեքստում: Տոնոյանն առանձնացնում է չորս հիմնական խաղացող՝ Թուրքիա, Ռուսաստան, Իրան և ԱՄՆ: Տոնոյանն այս հատվածի համար ընտրել ու առանձնացրել է այն հոդվածները, որոնք մեկնաբանում են Լեռնային Ղարաբաղում այս խաղացողների դերակատարության վերաբերյալ ռուսական պատկերացումները:

Վերջին՝ **չորրորդ հատվածը**, արդեն անդրադառնում է հակամարտության ներկայիս փուլին: Այն ներառում է ռուսական մամուլի այն հոդվածները, որոնք տպագրվել են 2016 թվականի Քառօրյա պատերազմից մինչև 2020 թվականի պատերազմը, որը Տոնոյանը անվանում է «Ստատուս Քվոյի մահը» (էջ. 419): Այս հատվածը ցույց է տալիս, թե ինչպես է ռուսական մամուլը ընկալում տարածաշրջանի ռազմականացումը, 2018 թվականի հեղափոխությունը Հայաստանում և թե ինչպես է Ռուսական կողմը վերաձևակերպում իր դիրքորոշումը հակամարտության այս նոր փուլում: Մի շարք հոդվածներ այստեղ առնչվում են Ռուսաստանի կողմից առաջնորդվող Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը (ՀԱՊԿ), այս կառույցի՝ պատերազմական գործողությունների ժամանակ չխառնվելու դիրքորոշմանը և ռուս-թուրքական հարաբերություններին:

Ակնհայտ է, որ այս աշխատանքը կարևոր ներդրում է մի շարք տեսանկյուններից: Միևնույն ժամանակ միշտ կարելի է ավելի լավ գործ անել: Մասնավորապես, ըստ իս, հեղինակի աշխատանքը միայն կշահեր, եթե նա որոշակի տեղ հատկացներ այս մամուլի՝ հոդվածների վերաբերյալ իր մեկնաբանություններին: Օրինակ՝ Տոնոյանը կարող էր յուրաքանչյուր հատվածից առաջ անդրադառնալ այդ հատվածում տեղ գտած հոդվածների

ընդհանուր նյութին, որպեսզի ընթերցողը շատ ավելի համատեքստավորված լիներ: Տոնոյանը կարող էր նաև յուրաքանչյուր հոդվածի առանցքային եզրերի, դեպքերի ու դեմքերի վերաբերյալ ծանոթագրություններ պատրաստել, ինչը ևս մեծ ներդրում կլիներ և կբարձրացներ գործի արժեքը:

Մակայն, անգամ առանց այդ մեկնաբանությունների ու ծանոթագրությունների, Տոնոյանի կատարած ներդրումը մեծ է: Գիրքը կարող է օգտակար լինել ոչ միայն Արցախյան հիմնահարցով հետաքրքրվողների համար: Կովկասում Ռուսական քաղաքականությամբ, ռուս-թուրքական ու ռուս-արևմտյան հարաբերություններով հետաքրքրվող գիտնականներն ու ուսանողները, ի դեմս այս գրքի, ունեն մի կարևոր աղբյուր, որը կարելի է օգտագործել նոր հետազոտությունների համար: Միևնույն ժամանակ, այս գիրքը կարևոր է նաև նրանց համար, ովքեր ուզում են հասկանալ, թե ինչպես է փոփոխվում/ել ռուսական քաղաքականությունը երեք տասնամյակի ընթացքում: Այլ կերպ ասած՝ այս աշխատանքն արժանի ներդրում է իր ոլորտում և օգտակար կլինի բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրված են Կովկասով, Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ, հետխորհրդային պետություններով, Ռուսաստանի արտաքին քաղաքականությամբ և որոշումների կայացման գործընթացով:

*Նաիրա Մահակյան*  
*Քաղաքակրթական և մշակութային*  
*հետազոտությունների կենտրոն*  
*Ճայնց Յեղասպանության թանգարան-ինստիտուտ*  
[n.e.sahakyan@gmail.com](mailto:n.e.sahakyan@gmail.com) <http://orcid.org/0000-0001-8595-7044>

## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

### ԵՎՐԱՍԻԱ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ԵՀՀ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՇԱՐՔԸ<sup>1</sup>

DOI 10.56673/18294502-22.15-94

Ներկայացվել է՝ 20 Հոկտեմբեր 2022

Ընդունվել է՝ 30 Նոյեմբեր 2022

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը (ԵՀՀ) «ԵՀՀ համալսարան» խորագրով շարք սկսեց հրատարակել 2015թ.-ից: Այս զարգացումը բխեց այն առաջնայնությունից, որն առաջացել էր ԵՀՀ-ի ծրագրերի իրագործման ընթացքում, այն է՝ հասցեագրել խոշոր և խորը հասարակական տեսական խնդիրները, դնելով դրանք այժմեականության խաչներուկում, քանի որ այդ խնդիրները չեն հասցեագրվում կամ բավարար չափով չեն հասցեագրվում ո՛չ հայաստանյան գիտական-հասարակագիտական հանրության, ո՛չ էլ քաղաքացիական հասարակության կողմից: Նույնիսկ եթե առաջին ոլորտն այդպիսի խնդիրներ հասցեագրում է, դրանք մնում են նեղ մասնագիտական շրջանակներին հասու, լավագույն դեպքում նեղ մասնագիտական պարբերականներում կամ մենագրություններում պարփակված: Երկրորդ ոլորտը, հաճախ հասցեագրելով այդ խնդիրների կիրառական կողմը, հաճախ ռեսուրս չունի դրանց խորքային արմատական հետազոտման համար: Այսպիսով, այս շարքի ձեռնարկումը հետապնդում էր հետևյալ նպատակները. ա. քննարկել այն հիմնահարցերը, որոնք

---

<sup>1</sup> Թափանցիկություն. ակնարկի հեղինակը ԵՀՀ տնօրենն է, ներկայացվող շարքի նախագծերի ղեկավար և շատ հրատարակումների համահեղինակ: Նյութը նախատեսված է հանրային իրազեկման համար, ռեկլամային տեքստ չէ և շահույթ չի հետապնդում:

որպես լուծելի խնդիր ձևակերպվում են ոլորտային քաղաքականությունների կողմից, սակայն դրանց խորքային պրոբլեմային մակարդակը մնում է չքննարկված. ք. ստեղծել միջոցիսցիայի նար մոտեցում որպես խաչմերուկ՝ «հիմնախնդրային» հարցերի և ռեֆորմների կարիքների, ինչպես նաև մի կողմից՝ գիտական մոտեցումների, մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակության մոտեցումների հանգույցում. գ. լայն հասարակությանը տրամադրել ժամանակակից նորարարական մոտեցումներ՝ հիմնախնդրային որոշակի հասկացությունների և երևույթների վերաբերյալ. դ. հայերեն և հասանելի ոճով արտահայտել հասարակական գոնե առանձին խնդիրներ, որոնք այսօր համաշխարհային մտածողության կիզակետում են. ե. անդրադառնալ հասարակական որոշ հարցերի առաջին անգամ՝ հայոց իրականության, իսկ երբեմն էլ՝ նույնիսկ միջազգային իրականության ծիրում:

Պետք է նշել նաև, որ կրթագիտական ոլորտի համատարած ճգնաժամի պատճառով (ներառյալ գրագողության հարցը) նույնիսկ եթե հայաստանյան հասարակագիտությունը (լայն իմաստով) այդ հարցերին երբեմն անդրադառնում է, այդ անդրադարձների որակը հաճախ, մեղմ ասած, խնդրահարույց է:

Որպես օրինակ բերեմ այն խնդիրները, որոնք առայժմ «ԵՀՀ համալսարան» շարքի մեջ չեն ընդգրկվել: Օրենքի խնդիրը հայաստանյան կիզակետում է արդեն բազում տարիներ: Խոսքը և՛ սահմանադրական գործընթացների մասին է, և՛ դատական համակարգի ռեֆորմների, և՛ հասարակության արժեհամակարգի: Սակայն հանրության կողմից լրջորեն չի քննարկվել օրենքի հիմքը, չի հասկացվել, ո՞րն է օրենքը և ինչու՞ է այն անհրաժեշտ, գիտակից ընտրություն չի արվել օրենքի հանդեպ «անզլո-սաքսոնական» և «մայրցամաքային» մոտեցումների միջև: Բացակայում են նաև հետազոտությունները օրենքի և հանրային արժեքների միջև

փոխկապվածության վերաբերյալ: Նույն կերպ էլ՝ կոռուպցիայի դեմ պայքարը. այն անընդհատ տեղի է ունենում, սակայն կոռուպցիայի կապը հանրային արժեքների, նիստուկացի, խորհրդային անցյալի և այլ գործոնների հետ մնում է բավարար չափով հանրորեն չքննարկված: Երկու թեման էլ եղել են քննարկումների արդյունք կրեատիվ խաղերի ժամանակ (տե՛ս կրեատիվ խաղերի մասին ստորև) և մի շարք հրապարակումների հիմք դարձել, օրենքի խնդիրը շոշափվել է վերջերս «Չորս պատմություն իշխանության մասին» աշխատության մեջ, սակայն երկու թեման էլ արժանի են ավելի համապարփակ և խորքային գննման:

Շարքի մտահղացումն ուներ ևս մեկ պատճառ. վերը բերված խնդիրները, ինչպես ասացի, քիչ են հասցեագրվել ոչ միայն տասնյակ տարիներ ճգնաժամային իրադրության մեջ գտնվող ինստիտուցիոնալ գիտության, այլև քաղաքացիական հասարակության կողմից: Սակայն եթե դրանք հասցեագրվել են կամ հասցեագրվում են՝ ապա հիմնականում «բանավոր» տարբերակով: Հենց այդ «բանավոր» մտեցումներից որոշ ռազմավարական ուղղություններն են, որ հանգեցրին այդ խնդիրները գրավոր կերպով ձևակերպելու կարիքի գիտակցմանը: «Բանավոր», սակայն չափազանց կարևոր ուղղություններից են եղել տարիների ընթացքում իրագործվող կրեատիվ խաղերը՝ մտագործունեության մեթոդաբանության վրա հիմնված, Դավիթ Հովհաննիսյանի առաջնորդությամբ, որոնք թեն արտադրում են նաև գրավոր արդյունքներ, սակայն դրանց ոճն անհասանելի է լայն հասարակության համար: Նույնպես կարևորագույն գործունեություն է ծավալել տարիների ընթացքում «Բուն» հիմնադրամն իր տեսանյութերով – միակ հանրային մեդիան, կարելի է ասել, որը հանձն է առել անդրադառնալ խնդիրների այդ մակարդակին և հաջողությամբ շարունակում է իր առաքելությունը:



Մեկ այլ նման ժանր է հենց ԵՀՀ-ի «Ձեռն սեշշըն»-ների շարքը<sup>2</sup>, որն ընդլայնված տեսաելությունների շղթա է՝ հանրային կարևոր խնդիրների ու գաղափարների (լինի դա պրոյեկտների կառավարում, դավադրության տեսություն, թե արխայիկ մտածողություն) խորքային տեսության և կիրառականության խաչմերուկում: Սակայն «բանավորը» բավական չէ: Եվ, չնայած փոփոխական այս աշխարհում որակյալ գրավոր տեքստեր ստեղծելը ռիսկային գործընթաց է (հնանում են արագ, ավելի մեծ ներդրում են պահանջում, քան բանավոր ժանրերը, որակյալ հրատարակությունն ստեղծելն իսկ Հայաստանի պայմաններում հաճախ խնդիր է (տես այդ մասին նաև հետո), վեջապես՝ ֆունկցիոնալ անգրագիտությունն այնքան համատարած է դարձել, որ շատերը տեքստի ընթերցումից պարզապես խուսափում են), ԵՀՀ-ն հանձն առավ «ԵՀՀ համալսարան» շարքի ստեղծումը:

Առաջին հրապարակումը, որ ընդգրկվեց շարքի մեջ, «Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ» խորագրով հոդվածների և հետազոտությունների ժողովածուն էր (2017)<sup>3</sup>: Նպատակն էր՝ հասկանալ հանդուրժողականությունն արժեքը, թե ինչպե՛ս է այն արտացոլվել, եթե արտացոլվել է, հայ գրականության մեջ դարերի ընթացքում: Այսպես կոչված «արևմտյան» արժեք և հայ գրականություն – այս խաչմերուկը հետաքրքիր հետևությունների առիթ դարձավ: Նախ՝ պարզ դարձավ, որ հանդուրժողականությունը որպես հասարակական արժեք բյուրեղանում է հասարակական հարաբերությունների

<sup>2</sup> *Jam Session Տեսակցություն*, ԵՀՀ, (մուտք՝ 15.10.2022), <https://epfarmeria.am/hy/Jam-Session>.

<sup>3</sup> *Հանդուրժողականության և անհանդուրժողականության դրսևորումները հայ գրականության մեջ*: [Հոդվածաշար]. Խմբ. կազմ Գևորգ Տեր-Գաբրիելյան, Անուշ Մարգարյան, Իգարելյա Մարգարյան և այլք, Եր., Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2017, 348 էջ, [https://epfarmeria.am/sites/default/files/Document/Tolerance\\_Intolerance\\_in\\_Armenian\\_Literature\\_book\\_2017.pdf](https://epfarmeria.am/sites/default/files/Document/Tolerance_Intolerance_in_Armenian_Literature_book_2017.pdf)

զարգացման որոշակի փուլում, պարզ ասած՝ բուրժուական հարաբերությունների ձևավորման ընթացքում, երբ կաստայական տարբերությունները սոցիալական խմբերի միջև թուլանում են, և երբ հասարակության անդամների խոշոր մասը ձեռք է բերում գոնե որոշ ազատություններ: Այդ ժամանակվանից է, որ որոշակի վարքն այլևս չի սպառվում «բարություն» կամ «մեծահոգություն» հասկացություններով և հումանիզմի՝ աբստրակտ հասկացված հարացույցով, և «հանդուրժողականություն» արժեքի կարիքն է առաջանում: Ժողովածուն լի է հետաքրքիր հետազոտություններով՝ հայոց էպոսի, Խաչատուր Աբովյանի, 19-րդ դարի հայ գրականության վերաբերյալ, ինչպես նաև այնպիսի վերլուծություններով, ինչպես «Քյառթուի կերպարը հայ գրականության մեջ» և անհանդուրժողականության դրսևորումները գրականության և պատմության ժամանակակից դասագրքերում:

Ժողովածուն բավական լայն ընդունելության արժանացավ, ուրեմն ճիշտ էր թիրախավորվել այդ խաչմերուկը՝ «օտարածին» հնչող արժեքի և «հարազատ» գրականության: Հատկապես հետաքրքիր էր քաղաքացիական հասարակության սովորական ծիրից դուրս շրջանակների՝ ուսուցիչների և գիտնականների արձագանքը: Սուր էմոցիոնալ քննադատության ենթարկվեց հատկապես դասագրքերի վերլուծությունն այն պատրվակով, որ այստեղ կոչ է արվում հանդուրժողականություն դրսևորել «հարևանների» նկատմամբ: Մինչդեռ հենց նույն գրքում Աբովյանի «Թուրքի աղջիկը» պատմվածքի վերլուծությունն աներկբայելիորեն վկայում է փոխադարձ մարդասիրության պահանջի մասին՝ ավանդված հայ ժամանակակից գրականության հիմնադրի կողմից: Գիրքը մնում է ակտուալ և արժանի է բազում քննարկումների:

Հնարավոր չէ ներկայացնել «ԵՀՀ համալսարան» շարքի բոլոր հրապարակումները, որոնք արդեն մոտ երեսունն են, և շուտով,

հուսանք, գալու են հավելյալները: Սակայն կարևոր է նշել «Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հոետորաբանական շեղող կիրառուկներ» (2019) գրքույկը<sup>4</sup>: Սա առաջին փորձն էր՝ հայոց իրականության մեջ ձևակերպելու, թե ի՛նչն է քննադատական մտածողությունը (տեքստերի համատեքստում), և ներկայացնելու մի շարք դեպքեր (փաստորեն «բառարանիկի» տեսքով), որոնց հայտնաբերումը ցույց է տալիս քննադատական մտածողության «բնագոյի» «միացման» կարիքը: Այս օրերին գրքույկի երկրորդ, անփոփոխ հրատարակության տպաքանակն է սպառվում, երրորդ հրատարակությունը կլինի լրամշակված:

Քննադատական մտածողությունն այս աշխատության մեջ դիտարկվում է ոչ թե «լուռ» արարքների, այլ տեքստերի և խոսքի ասպարեզում: Որպեսզի պարզ դառնա, թե ինչ է այն, սկզբում ձևակերպվում է նրա կարիքի բացակայության իրադրությունը, այն է՝ կառուցողական կամ կոռուպտիվ (համագործակցային) կոմունիկացիան: Հենց այդ կոմունիկացիայի կանոնների խախտումն է, որ ծնում է քննադատական մտածողությունը. երբ, պարզ ասած, հասցեատերը զգում է, որ իրեն ուղղված կոմունիկացիայում կա մանիպուլատիվ կոմպոնենտ: Կոմունիկացիոն էթիկայի և փիլիսոփայության մի շարք խնդիրների անդրադառնալով, ձեռնարկը եզրափակվում է խախտումների հանրահայտ ցուցակի հայերեն տեղայնացված թարգմանությամբ, ներառյալ այնպիսի հասկացություններ, ինչպես «Օվերտոնի պատուհանը» կամ «կարմիր ծովատառեխը», ինչպես նաև ավելի «շարքային» հոետորաբանական դեպքեր՝ խնդրին անդրադառնալու փոխարեն քննադատությունն անձին ուղղելը կամ «իսկ դու»

<sup>4</sup> «Քննադատական մտածողություն. տրամաբանական սխալներ և հոետորաբանական շեղող կիրառուկներ», խմբ. Գևորգ Տեր-Գաբրիելյան, Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2019, 56 էջ. .

պատասխանը, և այլն: Այս ձեռնարկը մնում է շատ օգտագործելի՝ ժամանակակից մեդիա և համացանցային աշխարհում, ներառյալ սոցիալական ցանցերում երթևեկելիս, քանի որ մանիպուլյացիոն կոմունիկացիան այդ տիրույթում կառուցողական կոմունիկացիայի համեմատ վերջերս դարձավ գերակշիռ, հատկապես նաև Ռուսաստան-Ուկրաինա պատերազմական գործողությունների զարգացմանը զուգընթաց: Ձեռնարկը ելնում է այն գաղափարից, որ փաստերի պարզ ստուգմամբ երբևէ հնարավոր չի լինի կողմնորոշվել համացանցային կոմունիկացիայի աշխարհում, և առաջարկում է հմտանալ քննադատական մտածողության անհատական կիրառման ասպարեզում: Այժմ, երբ քննադատական մտածողության կարիքն ընդգրկվել է նաև հանրակրթության ռազմավարության մեջ, մեթոդական մոտեցումները՝ թե ինչ է այն նշանակում և ինչպես այն կատարելիզացնել, շատ կարևոր են:

Լավ կլինի, եթե ձեռնարկի հաջորդ հրատարակությունն ավելացնի քննադատական մտածողության մոտեցման էությունը ոչ միայն տեքստերի, այլև արարքների իրադրություններում, ինչպես նաև հավելի հասանելի օրինակներ տրամաբանական սխալների փոքր-ինչ «գիտական» ձևակերպումներին:

Իհարկե, խոսել քննադատական մտածողության մասին առանց անդրադառալու այն հարցին, թե ի՞նչ է մտածողությունն ինքնին (ինչպես որ հենց վարվում են այդ հասկացությանն անդրադարձողներից շատերը) մեթոդապես ճիշտ չէ: Այդ հարցին անդրադառնում է «Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր» (2018)<sup>5</sup> գրքույկը: Արդեն նշվեց, որ ԵՀՀ-ն ակտիվորեն մասնակցում է Դավիթ Հովհաննիսյանի կողմից իրականացվող կրեատիվ խաղերին, և սույն տողերի հեղինակը համակարգված մտագործունեության

<sup>5</sup> Համակարգված մտագործունեության մեթոդաբանություն և կրեատիվ խաղեր, Եր.: Եվրասիա համագործակցության հիմնադրամ, 2021, 24 էջ,

մեթոդաբանությունը (ՀՄԳՄ) երկար տարիներ հետազոտողներից մեկն է: Իհարկե, ն՛ կրեատիվ խաղերը, ն՛ ՀՄԳՄ-ն շատ իմաստներով «բանավոր» են. նրանց սկզբնավորողների՝ Գեորգի Շչեդրովիցկու և Մերաբ Մամարդաշվիլիի նախասիրությունն էլ եղել է «բանավոր» աշխարհը (թեև՝ ձայնագրություններով ֆիքսվող), բնականաբար, հետևելով փիլիսոփայության մեջ հայտնի ավանդույթին՝ Սոկրատեսից սերող: Մակայն ինչպե՞ս «դրսի» մարդուն բացատրել, ի՛նչ է ՀՄԳՄ-ն: Ինչպես՞ ներկայացնել որոշակի մեթոդ, որը թույլ է տալիս խորքայնորեն քննարկել բազում խնդիրներ, ինչն իր հերթին թույլ կտա սխալ ռեֆորմներից խուսափել, քանի որ կպարզվեն խնդրի էության որոշ մանրամասներ: Մեր հասարակությունը մեծ կարիք ունի այդպիսի մեթոդների, գործընթացների կազմակերպման հանդեպ այդպիսի մոտեցումների: Ավաղ, այդ մեթոդն առանց պրոֆանացիայի ենթարկելու օգտագործելը դժվար է, այն ուսանել է պետք, սակայն և՛ հնարավոր է: Ինչպես նշում է Վահրամ Մարտիրոսյանը՝ ՀՄԳՄ-ն «հազարամյակների մշակման արդյունք է, որը «արկղից դուրս» է բերում խնդիրները, միտքը ազատագրում<sup>6</sup>:

Գրքույկում այս մեթոդը ներկայացնելու փորձ է արված, քննարկվում է ՀՄԳՄ-ի կիրառումը՝ կրեատիվ խաղերը, և դրանց օգտագործումը բազում ասպարեզներում՝ լինի կազմակերպչական ոլորտում, քաղաքաշինության, ռազմավարական, քաղաքականությունների մշակման, թե այլ: ՀՄԳՄ-ի քննարկումը և օգտագործումն անսպառ են, և թողնենք ընթերցողին որոշելը, արդյոք գրքույկում հաջողվել է գոնե մի քիչ բացատրել, թե ի՛նչ են ՀՄԳՄ-ն և կրեատիվ խաղերը:

<sup>6</sup> Վահրամ Մարտիրոսյան, «Զաղիասարակությունը որպես «նոր պետության» նախագծի հեղինակ և... մեղիա», *media.am*, 20.07.2021, <https://media.am/hy/critique/2021/07/20/28923/>.

Կարևոր է, որ գրքույկի որակյալ թարգմանությունը նաև հրատարակված է անգլերեն, ինչը թույլ է տալիս նաև միջազգային գործընկերներին գտնել մի քիչ պատկերացում կազմել այս մոտեցման վերաբերյալ: Ինչ վերաբերում է «մտածողության» ձևակերպմանը, տվյալ մեթոդի սահմաններում գլխավոր մոտեցումներից է՝ չխառնել այն մի կողմից հոգեբանական այլ դրսևորումների, մյուս կողմից՝ պարզունակորեն մեկնաբանվող «տրամաբանության» հետ (ինչը հաճախ է տեղի ունենում), այլ գիտակցել, որ մտածողությունը կոլեկտիվ սոցիալական գործողություն է, որի ընթացքում, արարքների և կոմունիկացիայի միջոցով, «մաղվում» են կարծիքները, մոտեցումները և այլն, և պահպանվում ու ֆիքսվում է որպես արժեքավոր այն, ինչը ձևակերպվում է որպես օրենք կամ օրինաչափություն կամ այդպիսին լինելու վարկած է: Վերջում ավելացնեն, որ «ռեֆլեքսիան» այս մոտեցման բանալի հասկացություններից է:

«ԵՀՀ համալսարան» շարքի հրատարակման գործընթացը ձեռնարկելը նշանակում էր նաև փորձ ձեռք բերել հրատարակության ասպարեզում: ԵՀՀ-ն մասնագետ հրատարակչություն չէր, և հրատարակության մասնագիտությունը ներկայացնող հայերեն նյութեր չէին գտնվում: Համագործակցելով տարբեր հրատարակչությունների հետ, տարիների ընթացքում ԵՀՀ-ն հայտնաբերեց մի շարք խնդիրներ, որոնք մնում են չհասցեագրված հայերեն տեքստեր հրատարակելիս: Այդ փորձառության արդյունքը եղավ ևս մեկ բացառիկ գրքույկ՝ «Հրատարակչական գործընթացի ուղեցույցը» (2019)<sup>7</sup>, որը, չնայած նախ և առաջ ԵՀՀ-ի տեքստային, ոճական և հրատարակչական կանոններն է ընդգրկում, օգտավետ կարող է լինել ցանկացած

<sup>7</sup> Գ. Տեր-Գաբրիելյան, Ա. Գրիգորյան, Ն. Պասկևիչյան, *Հրատարակչական գործընթացի ուղեցույց*, Եր.: Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2022., 68 էջ, [https://epfarmenia.am/sites/default/files/Document/EPF\\_Publishing\\_Algorithm\\_2022\\_0.pdf](https://epfarmenia.am/sites/default/files/Document/EPF_Publishing_Algorithm_2022_0.pdf).

կազմակերպության կամ անհատի համար, որը պատրաստվում է տպագիր տեքստ հրատարակել (թեև շատ կանոններ օգտագործելի են նաև համացանցային հրատարակության դեպքում): Ներկայացնելով ԵՀՀ-ի մոտեցումները՝ այս գրքույկը չի սահմանում պարտադիր կանոններ ուրիշների համար և ավելի շուտ որպես օրինակ է ներկայացվում հանրությանը: Իր կարևորությունը, սակայն, պայմանավորված է նրանով, որ ԵՀՀ-ն չկարողացավ հայերեն գրված նման ձեռնարկ հայտնաբերել, բացի 1953 թվականին հրատարակված՝ պոլիգրաֆիական տերմինների ռուս-հայերեն մի բառարանի: Ըստ երևույթին, հայաստանյան հրատարակիչներն առաջնորդվել են և առաջնորդվում են օտարալեզու ձեռնարկներով, իսկ այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ (հաշվի առնելով, որ տեքստը հայերեն է), հենվում են հրատարակչության ներքին մշակույթին և ավանդույթին:

Այս առիթով մի պատմություն: Երբ Պետրոս Առաջինը գնաց Կոպենհագեն՝ ուսումնասիրելու նավաշինությունը, այնտեղ նա նկատեց, որ նավերը կառուցվում էին «վարպետ-աշկերտ» մեթոդով. վարպետն ուներ «շաբլոնը»՝ նավի մասերի՝ կաշվից կտրած չափսերը, որը և բերում էր, դնում փայտի վրա, ուրվագծում, ըստ որի էլ փայտը կտրում էին: Նավի գծագիրը ոչ մի տեղ չկար, բացի վարպետի գլխից և շաբլոնների այդ հավաքածուից, որ վարպետը պինդ պահում էր: Հետո նա իր փորձը փոխանցում էր իր լավագույն աշկերտին, որը հաճախ իր որդին էր: Մեկ տարի անց Պետրոս Առաջինը մեկնեց Գլազգոյի նավաշինարանը դիտելու: Այստեղ իրադրությունը բավական այլ էր. կար նավի գծագիրը՝ հաշվարկներով, չափսերը գրված, և ցանկացած ոք կարող էր այն վերցնել և օգտագործել նավ կառուցելու համար: Այդ իսկ պատճառով Դանիան չդարձավ «ծովերի թագուհի», իսկ Բրիտանիան՝ դարձավ: Ֆիքսված սխեմատիկ տեխնոլոգիան՝ քայլերի ալգորիթմը որպես բոլորին հասանելի գործիք, ֆիքսված

պրոյեկտը, նախագիծը, սխեման, պլանը, գծագիրը, ծրագիրը, ալգորիթմը, տեխնոլոգիան, քարտեզը - համաշխարհային առաջընթացի կարևորագույն գործոններից են: Դրանք թույլ են տալիս ինստիտուցիոնալ հիշողությունն անկորուստ հաղորդել հաջորդ խմբերին և առանձին վարպետի գործը դարձնել ինդուստրիալ գործընթաց: ԵՀՀ-ն առանձնապես մտահոգված է այդ խնդրով, և իր գործունեության մի խոշոր մասն այդպիսի գործիքներ ստեղծելն է, գործիքներ, որոնք թույլ են տալիս այն, ինչ մինչ այդ գուտ «արվեստ» էր՝ կախված անձի ստեղծագործականությունից, դարձնել տեխնո: Եվ եթե նույնիսկ դրանց այլամշակույթ տարբերակները կան՝ ստեղծել տեղականը, հայաստանյան իրականությանը համապատասխան տեղայնացված: Այդպիսին են, օրինակ, ԵՀՀ-ի ստեղծած՝ քաղաքացիական հասարակությունների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունների զարգացման գործիքները:

Այդ իսկ պատճառով հույս կա, որ ԵՀՀ-ի «Հրատարակչական գործընթացի ուղեցույցը» ևս պետք կգա շատերին: Իսկ հրատարակության ասպարեզում հասցեագրման արժանի խնդիրները շատ են. սկսած լեզվաոճական հարցերից (խմբագիր-սրբագրիչ գործունեությունների խառնաշփոթից, լեզվի մի շարք հարցերի՝ լուծված չլինելուց) մինչև տառատեսակների խնդիրները (հայերեն տառատեսակների մեծ մասն ունեն խնդիրներ) և այլն:

Հնարավոր չէ, ինչպես վերն ասացի, մի ակնարկում ներկայացնել «ԵՀՀ համալսարան» շարքի բոլոր հրապարակումները: Բավարարվեմ վերջին երկու խոշոր գրքերը ներկայացնելով: «Բռնության մշակույթը Հայաստանում» (2020)<sup>8</sup>

<sup>8</sup> *Բռնության մշակույթը Հայաստանում*, Գ. Տեր-Գաբրիելյան (գլխավոր խմբագիր), Գ.

Հովակիմյան, Հ. Սմբատյան, Դ. Պետրոսյան, Յ. Ավագյան, Շ. Խուրշուդյան, Եր.:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, 404 էջ,

[https://epfarmenia.am/sites/default/files/Document/Roots\\_of\\_violence\\_online\\_version.pdf](https://epfarmenia.am/sites/default/files/Document/Roots_of_violence_online_version.pdf).



փոքր-ինչ սադրիչ վերնագրով խոշոր աշխատությունը պարունակում է հողվածներ, որոնք անդրադառնում են բռնության մշակույթի արմատներին՝ ցարական Ռուսաստանում «գողական» «Բլատնոյ» մշակույթի սկզբնավորումից, խորհրդային գուլագային ժամանակներից մինչև մեր օրերը, ինչպես նաև այդ մշակույթի ամենախնդրական դրսևորումներին՝ ընտանիքում, դպրոցում և բանակում: Մի կողմից, Հայաստանում պայքար է գնում այդ մշակույթի դեմ, մյուս կողմից, այս ասպարեզում մի շարք խնդիրներ տարուսցված էին, և գիրքը փորձ է անում գոնե մի քիչ շղարշը բարձրացնել այս հարցերի վրայից: Օրինակ, համարվում է, որ «գողական (ենթա) մշակույթը» վերաբերում է միայն «գողականներին» կամ է՛լ ավելի սահմանափակ՝ «օրենքով գողերին», մինչդեռ ցանկացած անկողմնակալ քաղաքացի կարող է նկատել, որ այն վաղուց արդեն՝ դեռ խորհրդային 60-ականներից ի վեր սողոսկել է առօրյա. թեկուզև պարողիական ձևով՝ մանչուկներն ու երիտասարդներն այն ծաղրանմանակում են, և հենց դա է, ասենք, որոշակի ենթամշակույթների, ինչպես օրինակ՝ «քյառթունների» ենթամշակույթի կարևոր բաղադրիչը, դպրոցում հետապնդումների, էլ չասած՝ բանակում ոչ կանոնակարգային հարաբերությունների, բանտային ենթամշակույթի և այլն: Այդ վարվելակերպն ու խոսելակերպը մտել են հասարակության ուղնուծուծն ու ամպրանդվում են խոսքային որոշակի ոճերով, որոնք էլ իրենց հերթին պայմանավորում են որոշակի վարքեր: Այդպիսով, ինչպես Գեմաֆին Գասպարյանն է նշում գրքի արդյունքների քննարկմանը նվիրված իր էսսեում<sup>9</sup> (էջ 38)՝ առաջնային խնդիրը լեզուն է: Եվ իրոք, լեզվի ազդեցությունը վարքի

<sup>9</sup> Մ. Հովհաննիսյան, Գ. Գասպարյան, Գ. Հովակիմյան, Հ. Սմբատյան, Ծ.

Խուրշուղյան, *Բռնության մշակույթը Հայաստանում. անդրադարձ և առաջարկներ*, Եր.:

Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, 2020, էջ 38,

[https://epfarmeria.am/sites/default/files/Document/Roots\\_of\\_violence\\_recommendation\\_s\\_online\\_version.pdf](https://epfarmeria.am/sites/default/files/Document/Roots_of_violence_recommendation_s_online_version.pdf)

վրա, վարքը նույնպես որպես «լեզու»՝ նշանային և հաղորդակցական համակարգ հասկանալը բարձրորդի է արված այսօր, լեզվաբանությունը և նշանագիտությունը մեզանում գրեթե իսպառ բացակայում են կամ՝ հաճախ սխալ մեթոդական հիմքերի վրա են հենվում: Սա բերում է լեզվաբանական հետազոտությունների և պրոյեկտների կարիքի (որոնց ԵՀՀ-ն կփորձի անդրադառնալ առաջիկայում):

Այդպիսի նախագծերից մեկն այժմ իրագործվում է. ԵՀՀ գործընկերներն աշխատում են «Գողական լեզվի բառարանի» վրա: Հայտնի է, որ Հրաչյա Աճառյանն է փորձել ստեղծել այդպիսի բառարան, նույնիսկ հանդիպել է գողականների՝ հատուկ պայմաններում, սակայն այդ բառարանի ձեռագիրը ցայսօր հայտնաբերված չէ: Այսօր, իհարկե, կարիք չկա աչքերը կապած՝ «գողականների» հետ հանդիպումներ փնտրելու, որպեսզի այդ լեզվի բառարանը կազմես. թեկուզև իր պարողիական տարբերակով՝ պատանիների ամենօրյա բարքուվարքում՝ միմյանց հետ շփվելիս, կամ բանտում՝ «բարբառային» իր ուրույն տարբերակներով, այն սփռված է լեզվով մեկ: Էլ չասած, որ ռուսերեն այդպիսի բազում հետազոտություններ և բառարաններ կան ազատ մատչելիության՝ համացանցում, իսկ հայերենի գողական բառապաշարի խոշոր մասն անպայման առնչություն ունի ռուսերենին (թեև հաճախ ռուսերենը զուտ միջանկյալ է՝ իդիշից եկող հասկացությունների համար, և կան նաև ոչ ռուսերենից եկող բառեր ու արտահայտություններ՝ թուրքերենից, անգլերենից և այլն):

Մյուս խոշոր ձեռնարկը վերջերս լույս տեսած «Չորս պատմություն իշխանության մասին» (2022)<sup>10</sup> աշխատությունն է: Սրա նպատակն էր, ինչպես որ ամենասկզբում ձևակերպեցի՝

<sup>10</sup> Նաիրա Մկրտչյան, Գևորգ Տեր-Գաբրիելյան, Վարսեր Կարապետյան, Արմեն Գրիգորյան, *Չորս պատմություն իշխանության մասին*, Եր.: ԵՀՀ, 2022, 224 էջ, [https://epfarmenia.am/sites/default/files/Document/Four\\_Stories\\_about\\_Power\\_Web\\_2022\\_0.pdf](https://epfarmenia.am/sites/default/files/Document/Four_Stories_about_Power_Web_2022_0.pdf).

հանրությանը որոշակի չափով իրազեկել իշխանություն հասկացության և երևույթի տարբեր դրսևորումների վերաբերյալ: Իշխանությունն անընդհատ քննարկման կենտրոնում է հայաստանյան դիսկուրսում, սակայն նրա դրսևորումների վերաբերյալ քիչ թե շատ համապարփակ մոտեցումը բացակայում է: Գրքում դիտարկվում են իշխանության՝ բռնության վրա հիմնված, «բուրգային» տարատեսակներից մինչև ավելի մասնակցային, շարքային անձին իշխանությունից «մաս հանող» բազում տարատեսակներ: Գրքում են առաջարկել եմ «իշխ» տերմինը, պատճառաբանելով, որ, ի տարբերություն անգլերեն power հասկացության, հայերեն չեն ասի «պնդման իշխանություն» (the power of argument), և այլն: Իհարկե, կարելի է ասել «պնդման ուժը» կամ համոզիչությունը, սակայն հայոց ճկուն լեզվի կողմից առաջարկվող այդ տարբերակներում կորչում է իշխանություն-իշխի՝ մի ձևից մյուսին գրեթե սահուն կերպով անցման հնարավորությունը, այդ երևույթի սպեցիֆիկությունը: Գրքում քննարկվում են Ջոն Լոքի և Թոմաս Հոբսի մոտեցումները, Միշել Ֆուկոյի և դրան առնչվող՝ իրականության սոցիալական կառուցման երևույթից բխող մոտեցումը, բացատրվում են այնպիսի հասկացություններ, ինչպես «փափուկ ուժ», «ազդեցություն», «կառուցվածքային իշխ», «կառուցվածքային բռնություն» և այլն: Անդրադարձ է արվում քաղաքական և այլ տիպի իշխերի ամենատարբեր դրսևորումներին, ամենաներառականից մինչև ամենաբռնին մինչև ահաբեկչությունը՝ որպես անհատական իշխի ծայրահեղ դրսևորում, քննարկվում են «ճանաչման» իշխը և «չճանաչված պետությունների» ճակատագիրը, «անվտանգության դիլեման» և միջազգային օրենքը՝ ինքնիշխանության հղացքի կոնտեքստում: Գիրքն ընդգրկում է նաև տեղեկատվություն Հայաստանի իշխանական համակարգի վերաբերյալ (ի՛նչ պիտի իմանա հայաստանցին իր իշխանական համակարգի մասին, գոնե՝

մինիմում), ինչպես նաև չորս դեպք. Չեխիայի, Հունգարիայի, Սլովակիայի և Լեհաստանի իշխանական համակարգերի վերափոխումն ու զարգացման ընթացքը սոցիալիստական ճամբարի փլուզումից հետո:

«ԵՀՀ համալսարան» շարքն ընդգրկում է մի շարք այլ հրապարակումներ, որոնք ունեն մեթոդական նշանակություն, ինչպես, օրինակ՝ ԵՀՀ-ի մոտեցումը կրթության հարցերին<sup>11</sup> և դրան առնչվող՝ քաղաքացիական կրթության կարողունակությունները գնահատելու գործիքի նախագիծը, որ հրապարակման փուլում է և շուտով հասանելի կլինի: Ըստ այդ նախագծի՝ պետք է կենտրոնանալ չորս կարևորագույն կարողունակության վրա. քննադատական մտածողություն, պրոյեկտային պարադիգմ, բուն քաղաքացիականություն և սուբյեկտայնացում:

Շարքի բոլոր հրատարակությունները հասանելի են նաև համացանցային տարբերակով: Այժմ կարևորագույն նպատակներից է, որպեսզի այս նյութերն ընկալվեն, քննարկվեն, քննադատվեն, ներառյալ՝ կրթոտ կերպով, և օգտագործվեն կամ մերժվեն, այդ իսկ պատճառով ԵՀՀ-ն բազում միջոցառումներ է կազմակերպում տարբեր լսարանների հետ՝ այս հրապարակումները ներկայացնելու համար: Այդ նկատառումով է պայմանավորված նաև սույն հրապարակումը: Եթե շարքի առաջին հրապարակումը՝ «Հանդուրժողականությունը», արժանացավ կարծիքների, ինչպես նշեցի, ներառյալ սուր-ազգայնական տեսակետից, ապա մյուս գրքերը ֆիքսված կարծիքներ առայժմ քիչ են ստանում: Պատճառները տարբեր կարող են լինել. քննարկման և քննադատության մշակույթի գրեթե իսպառ բացակայությունը հայաստանյան իրականության մեջ, կամ՝ անհամաձայնությունը, որը բերում է որոշման՝ լռության ենթարկել այս կամ այն նյութը:

<sup>11</sup> «ԵՀՀ կրթություն և ուսուցում», ԵՀՀ, (մուտք՝ 15.10.2022), <https://epfarmenia.am/hy/document/EPF-Education-and-Learning>.

Պիտի հաշվի առնվի, իհարկե, նաև հասարակության անմխիթար վիճակը՝ համավարակից և պատերազմից հետո, շարունակվող էկզիստենցիալ ճգնաժամի պայմաններում: Մակայն ԵՀՀ-ն շարունակելու է ակտիվ կարծիքների փնտրտուքը, և ամեն հրապարակում հետադաձ կապի հնարավորություն է տալիս հետևյալ իմակով. *info-epf@epfound.am*:

Ավարտեմ այս ակնարկը, մեկնաբանելով Վահրամ Մարտիրոսյանի տեքստից մի մեջբերում (իբ հողվածը բավական համապարփակ ներկայացնում է ԵՀՀ ամբողջական գործունեությունը). «Ինձ դուր են գալիս մեծ նպատակներ հետապնդող անձինք ու հաստատությունները, «երազողները» և, այո, համաձայն եմ, որ ԵՀՀ-ը նոր սերնդի մեղիա մողել է: Տեղեկատվական պոտոր ջրերում՝ մի օազիս, որտեղ կարելի է նոր գաղափարների հանդիպել, փակուղիների մերժման, քաղաքացու հանդեպ սրտացավության ու քաղաքացիական դիրքորոշման քաջալերման, մտքի ազատագրման քաջալերման՝ մասնակցության եղանակով»<sup>12</sup>: 2021 թվականի աշնանը հերթական կրեատիվ խաղի ժամանակ ԵՀՀ-ն գործընկերների լայն խմբի հետ միասին քննարկեց քաղաքացիական հասարակության ներկա վիճակն ու առաջնայնությունները: «Պետությունը թվային աշխարհում» խումբը<sup>13</sup>, վստահության համապարփակ ճգնաժամը քննարկելուց բացի (վստահությունը ևս այն երևույթներից է, որոնց լավ կլիներ նվիրել «ԵՀՀ համալսարան» շարքի մի հատոր՝ ավելի համապարփակ և բազմակողմանիորեն այդ երևույթը քննարկելու

<sup>12</sup> Վահրամ Մարտիրոսյան, «Քաղաքացիականությունը որպես «նոր պետության» նախագծի հեղինակ և... մեղիա», *media.am*, 20.07.2021, <https://media.am/hy/critique/2021/07/20/28923/>.

<sup>13</sup> ««Պետությունը թվային աշխարհում» խաղատեխնիկի ընդլայնված հաշվետվություն», «Աջակցություն քաղաքացիական հասարակությանը» ծրագիր «Քաղաքացիական հասարակության անելիքները ներկա պայմաններում» կազմակերպագործունեական խաղ, (մուտք՝ 18.10.2022), <https://epfarmenia.am/hy/document/Creative-Game-State-in-the-Digital-World-2021>.

համար), ստեղծեց մի հասկացություն՝ «կրթացում»: Կրթացումը նշանակում է միաժամանակ մի քանի բան.

ա. Այն ամեն արժեքավորը, ինչ յուրաքանչյուրս գիտի՝ պիտի նաև դարձնի ուրիշներին՝ մոտիկ թե հեռու, շրջապատին և հասարակությանը իրազեկելու, սովորեցնելու նյութ.

բ. Ամենը, ինչին ժամանակակից մարդը հանդիպում է՝ կրթվելու, հասկանալու, մեկնաբանելու նյութ է, ինչպես նաև՝ հետո հասկացածդ մյուսներին բացատրելու:

Այսինքն կրթացումը շրջակա աշխարհի ամեն մանրամասնի՝ կրթվելու և կրթելու նյութ դառնալն է: Եվ ամեն ժամանակակից անձ պիտի դառնա միաժամանակ և անընդմեջ գիտակից կերպով կրթվող և կրթող, այսինքն պիտի գիտակից կերպով վերակազմակերպի իր կյանքը՝ այս նոր իրավիճակին ադապտացվելու նպատակով, այդ գործընթացը, որն առանց այն էլ տեղի էր ունենում՝ հանի գիտակցության «լուսավոր» ոլորտ: Իհարկե, ամեն անհատ ամենը չի կարողանա այդպես դիտարկել, միշտ կան առաջնայնություններ, սակայն մարդկության հավաքական զարգացումը գնում է նաև այդ ուղղությամբ՝ խնդրականացնել անխտիր ամենը՝ որպես ուսումնասիրման, հասկանալու, քննադատելու, օգտագործելու և ուսուցանելու նյութ և առարկա: Ըստ խմբի տրամաբանության՝ այդ ուղղությամբ է շարժվում աշխարհը նաև շնորհիվ համացանցի և չնայած բոլոր մարտահրավերներին: Այսպիսով, ԵՀՀ-ն ո՛չ միայն մեղիա է. մեղիան կրիչն է՝ միջոցը. ԵՀՀ-ն նաև համալսարան է՝ կրթացման գործընթացի մեջ ընդգրկված, և կրթական իր ռազմավարությունը հենց այս պոստուլատների վրա է հիմնված:

Որակյալ գիրք ստեղծելը կոլեկտիվ և թիմային գործ է, որում ներգրավված են բազում մարդիկ. պրոյեկտի կազմակերպիչներ, հեղինակներ, ձևավորողներ, խմբագիրներ, տպագրիչներ, հաշվապահներ և այլն: Ավաղ, ի տարբերություն ֆիլմերի տիտրերի,

որտեղ նույնիսկ ռեժիսորին սուրճ բերողն է նշվում, գիրք ստեղծողների ցուցակների «լավաշները» հաճախ չեն հրապարակվում գրքում, թեև անհասկանալի է, ինչու: Այժմ, երբ գիրքը մեզանում դառնում է գրեթե «դեմոդե», այդ մոտեցումն էլ պետք է վերանայել. ամեն որակյալ գիրք այժմ Հայաստանում դառնում է ունիկալ թիմային պրոդուկտ: Վերջում ուզում եմ այդ բոլոր մարդկանց շնորհակալություն հայտնել՝ հաճախ բավական անողորմ պայքարի, ընդվզման, միասին սովորելու և բոլոր ընդհարումներից հետո, ի վերջո, միասնաբար գործելու համար, համառության և նվիրվածության համար: Ինչպես նաև, իհարկե, շնորհակալություն արևմտյան մեր բազում դրամաշնորհատուներին, որոնց խոշոր ծրագրերի «լուսանցքներում» հնարավոր է դառնում այս շարքի իրագործումը տարեցտարի:

*Գևորգ Տեր-Պարրիեյան<sup>14</sup>  
արձակագիր, ԵՀՀ տնօրեն*

---

<sup>14</sup> Հատուկ շնորհակալություն Դիանա Ծախրազյանին, որն այս տեքստի համար նյութ նախապատրաստեց:

2022

---

Analytical Bulletin  
of  
Center for Culture and Civilization Studies Foundation

Tel: (37460) 710594

E-mail: [analyticalbulletin@cccs.am](mailto:analyticalbulletin@cccs.am).

[www.cccs.am](http://www.cccs.am)

<https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/about>

---